

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

**Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐԶԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ
ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ՏՈՒՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ՕՐԿԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում համայն Մեր ժողովրդին՝ Հաղթանակի եւ խաղաղության պանծալի տոնի եւ Շուշիի ազատագրման օրվա առիթով:

Ազգերի ու պետությունների հետ տոնում ենք պատմական հաղթանակը ֆաշիզմի ու բռնության դեմ պայքարում, որին մասնակցություն բերեցին մեր ժողովրդի բազմահազար գավակներ՝ հայազգի փառապանծ զորավարներ ու զինվորներ: Տոնում ենք Շուշիի ազատագրումը եւ հաղթանակը Արցախյան ազատամարտում, որով պաշտպանեցինք մեր ժողովրդի ազատ, արժանապատիվ կյանքի արդար իրավունքը:

Մայիսի 9-ի հաղթական խորհուրդն այսօր առանձնակի զգացումներով է լցնում մեր հոգիները, քանզի հայրենավիրուծի նույն ջերմ ոգով մեր զավակները ապրիլյան օրերին իրենց սխրանքներով դիմակայեցին Ադրբեյջանի սանձազերծած ռազմական գործողություններին՝ անառիկ պահելով մեր սահմանները:

Ադրբեյջանը բարձրացնում, որ Տերը խաղաղության Իր շնորհի ներքո պահպանի աշխարհը, մեր հայրենիքն ու ժողովրդին եւ Իր Աջի հովանին տարածյալ պահի մեր Բանակի մարտիկների ու զորավարների վրա, ովքեր շարունակում են քաջաբար պաշտպանել ազատ ու խաղաղ կյանքը մեր ժողովրդի:

Հիսուս Բրիստոսի Համբարձման տոնը՝ Սբ Էջմիածնի ուխտի օր



Մայիսի 5-ին՝ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Բրիստոսի հրաշափառ Ս. Հարության քառասուներորդ օրը, Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին մեծ շուքով նշեց Համբարձման բերկրառատ տոնը, որի ընթացքում տոնախմբվում է Նաեւ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի՝ 1441 թ. Սսից Սբ Էջմիածնի փոխադրության պատմական հիշատակը: Տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ հոգակվել է Նաեւ Սբ Էջմիածնի ուխտի օր:

Այս առիթով Մայր Աթոռ Էին ժամանել հայաստանյան թեմերի առաջնորդները եւ բազում ուխտավորներ:

Տերուական օրվա կապակցությամբ Միածնաէջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագին էր Հայաստանի աստվածաշնչային ընկերության զխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը:

Իր քարոզում սրբազան հայրն անդրադարձավ Համբարձման տոնի պատգամին՝ նշելով. «Հարությունից քառասուն օր անց Բրիստոս հավաքեց Իր աշակերտներին եւ բարձրացավ Ջիթեկյաց լեռը՝ երկինք համբարձվելու եւ Հայր Աստծու աջ կողմում նստելու: Համբարձման տոնը, որ մենք տոնում ենք այսօր, մեզ ամեն տարի հիշեցնում է, որ պարտավոր ենք հետեւել Բրիստոսի օրինակին, կատարել Աստծու բոլոր պատվիրանները, ապրել այնպիսի կյանքով, որպեսզի, երբ ժամանակը գա, կարողանանք համբարձվել, բարձրանալ եւ նստել Աստծու աջ կողմում»:

Խոսելով Տիրոջ կողմից Համբարձման ժամանակ աշակերտներին տրված պատվիրանի մասին, այն է՝ քարոզել փրկության Ավետարանը, Եզնիկ արքեպիսկոպոսը ներկայացրեց Հայաստանում ս. Թադեոս եւ ս. Բարդուղիմեոս առաքյալների իրականացրած քարոզչությունը եւ Հայոց Եկեղեցու հիմնադրումը:

«Ս. Թադեոս եւ ս. Բարդուղիմեոս առաքյալները հաստատեցին Հայ Եկեղեցին, որով հայ ժողովուրդը դարձավ Աստծու ընտրյալ տոհմ ժողովուրդ: Անշուշտ, մենք հասկանում ենք, որ բոլոր քրիստոնյաներն են Աստծու ժողովուրդ, սակայն ամեն մի Եկեղեցի՝ ազգային թե տեղական, իր ամբողջության մեջ Աստծու Եկեղեցին է: Եվ այն վավերական Եկեղեցի է մնում այնքան ժամանակ, ինչքան որ ինքն իրեն զգում է Բրիստոսի համաշխարհային Եկեղեցու անբաժան մասնիկը: Եվ մեր ժողովուրդը երկու հազար տարի շարունակ ապրեց քրիստոնեական կյանքով ու արժեքներով: Մեր ժողովուրդը միշտ հիշեց Համբարձման տոնը եւ զգաց, որ ինքը միշտ պետք է համբարձվի», - նշեց պատարագի սրբազանը:

Այս կապակցությամբ Եզնիկ արքեպիսկոպոսը, անդրադարձ կատարելով վերջին օրերին Ադրբեյջանի սանձազերծած ռազմական գործողություններին, խոսեց Նաեւ հայրենյաց պաշտպանության համար իրենց կյանքն ընծայած զինվորների մասին:

«Նրանք բռնեցին այն ճանապարհը, որ տանում է առ Աստված, նրանք բռնեցին այն ճանապարհը, որ տանում է սրբազան ուղիով, եւ մենք՝ Հայ Եկեղեցին եւ հայ ժողովուրդը, այսօր այնպիսի անհատներ ձեռք բերեցինք, որոնց անունը միշտ պիտի գրվի մեր Եկեղեցու պատմության մեջ, որովհետեւ պաշտպանելով հայոց հողը՝ մենք պաշտպանում ենք Բրիստոսի անունը: Աստված է, որ հայրենիքը հասկացությունը տվել է մարդկությանը, եւ հայրենիքի պահպանությունն այն պարտադիր գրավական է, որ ամեն մի ազգի դարձնում է ազգ...», - ընդգծեց սրբազանը:

Պատարագի սրբազանը Նաեւ իր խորհրդածությունները ներկայացրեց Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի փոխադրության հիշատակի առիթով: Այս կապակցությամբ Նա մասնավորապես նշեց. «Դժվարին օրեր էին Կիլիկիայում, եւ հայ ժողովուրդը, որ այնտեղ երեք հարյուր տարի երկրի տերն էր, կորցնում էր իր իշխանությունը, Նաեւ վտանգված էր Հայոց Աթոռը՝ ոչ միայն քաղաքական, այլեւ միջկրոնական հարաբերությունների իմաստով, երբ Արեւմուտքն ինչ-ինչ խոստումներով պարտադրում էր մեզ մոռանալ Հայոց Եկեղեցու ավանդույթները: Եվ Հայ Եկեղեցու վարդապետները ոտքի կանգնեցին եւ ասացին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը պիտի տեղափոխվի եւ հավիտյան վերահստատվի այնտեղ, որտեղ Բրիստոս Ինքը ցույց տվեց, թե այդտեղ պիտի կառուցեք Իմ Եկեղեցին: ...Այդ օրվանից Աստծո օրհնությունն Ամենայն Հայոց Հայրապետների միջոցով, Ամենայն Հայոց Հայրապետների ձեռքով օրհնված Սյունուի միջոցով Մայր Աթոռ Սբ Էջմիածնից տարածվում է ամբողջ աշխարհով մեկ՝ այնտեղ, որտեղ կա հայ հավատացյալ»:

Պատարագի ավարտին, Նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Արարողության ընթացքում հոգեւոր դասը եւ ներկա ժողովուրդը աղոթեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության ու շենացման եւ Լուսավորչի Աթոռի 132-րդ գահակալ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենաց արեւշատության համար:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

6 մայիսի

«Պլեներ Հայաստան - 2016» գեղանկարչության միջազգային սիմպոզիումի մասնակիցներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Պլեներ Հայաստան - 2016» խորագրով գեղանկարչության միջազգային սիմպոզիումի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ղեկավար պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի եւ ՀՊՄՀ կերպարվեստի ամբիոնի վարիչ, ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆ. Փարավոն Միրզոյանի:

Մայիսի 1-10-ն անցկացվող սիմպոզիումին մասնակցում էր 16 ճանաչված գեղանկարիչ Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Լեհաստանից, Լիտվայից, Լատվիայից եւ Իրանից:

Հանդիպմանը խոսք ասաց Մանկավարժական համալսարանի ղեկավար Ռուբեն Միրզախանյանը՝ վստահություն հայտնելով, որ միջազգային սիմպոզիումի մասնակիցների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն անջնջելի տպավորություն կթողնի վերջիններսին հետագա ստեղծագործական կյանքի վրա: Ապա տիար Ռ. Միրզախանյանը Փարավոն Միրզոյանին հրավիրեց Նորին Սրբությանը ներկայացնելու սիմպոզիումի մասնակիցներին:

Այցի կապակցությամբ Փ. Միրզոյանը Մայր Աթոռի թանգարանին ընծայաբերեց Թեքեյան կենտրոնի մրացանակի արժանացած իր գեղանկարը՝ հավելելով, որ յուրաքանչյուր արվեստագետի համար մեծագույն պատիվ է Մայր Աթոռի թանգարանում նկար ունենալը:

Այնուհետեւ ներկաներին իր օրինությունը եւ գնահատանքը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, անդրադառնա-

լով հայ ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցու ստանձնած առաքելությանը, փաստեց, որ դարեր շարունակ՝ քրիստոնեական հավատքի ընդունման պահից ի վեր, Հայ Եկեղեցու հովանու ներքո է զարգացել հայ մշակույթը, կերտվել հայկական մշակութային արժեքների անգին գոհարներ, որոնցում տեսանելի է հոգեւոր կյանքի արտահայտությունը:

Կարելուր նկատելով միջազգային սիմպոզիումի անցկացումը Հայաստանում՝ Հայոց Հովվապետը հավելեց, որ այսօրինակ նախաձեռնությունները նպաստում են մշակույթների միջեւ երկխոսության ավելի զորացման ու ամրապնդմանը, ինչպես նաեւ ձեւավորվում է փոխհասկացողության ջերմ մթնոլորտ, որտեղ հնարավոր է դառնում ստեղծագործությունների միջոցով ծանոթանալ միմյանց աշխարհընկալումներին, մտածողությանը եւ ազգային-արժեքային ավանդներին:

Անդրադառնալով հայոց սահմաններին տիրող կացությանը եւ ցավալի կորուստներին՝ Նորին Սրբությունը հորդորեց արվեստագետներին՝ շարունակել աշխարհին խաղաղություն, համերաշխություն եւ մարդասիրություն քարոզելու իրենց առաքելությունը:

Վերջում Վեհափառ Հայրապետն աղոթքով մաղթեց, որ ներշնչանքը մշտապես անպակաս լինի սիմպոզիումի մասնակից գեղանկարիչներից եւ աստվածատուր տաղանդն արդյունավորվի նորանոր գեղեցիկ ստեղծագործություններով: Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:



11 մայիսի

Արմավիրի թեմի առաջնորդին եւ Սարգսյանի թանգարանի տնօրենին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն Եպս Աղամյանին եւ Սարգսյանապատի հերոսամարտի հուշահա-

մալիրի, Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրեն Կարեն Արիստակեսյանին:

Սիոն սրբազանն ու տիար Կ. Արիստակեսյանը Նորին Սրբությանը տեղեկացրեցին 2018 թվականին տոնախմբվելիք Սարգսյանապատի ճակատամարտի 100-ամյակի առիթով նախանշվող ծրագրերի մասին: Քննարկվեցին հորեյանական տարվան ընդառաջ կազմակերպվելիք միջոցառումներն ու ձեռնարկները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահա-

տեց ներկայացված նախաձեռնությունը՝ կարելուր հայ ժողովրդի կյանքում մայիսյան պանծալի հաղթանակների տոնախմբումը: Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բերելով Սիոն սրբազանին ու տիար Կ. Արիստակեսյանին, նշեց, որ Մայր Աթոռն իր մասնակցությունը կբերի եւ ըստ ամենայնի կաշակցի փառահեղ հաղթանակի տոնախմբության առիթով նախաձեռնված ծրագրերին:

12 մայիսի

«Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության ղեկավար խորհրդի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության (ACT Alliance) ղեկավար խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ խորհրդի անդամ, ԵՀԽ հայաստանյան «Կլոր սեղան» բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի:

«Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության խորհուրդը՝ բաղկացած քրիստոնեական տարբեր կառույցների եւ կազմակերպությունների 19 ներկայացուցչից, իր հերթական տարեկան ժողովը գումարել էր Հայաստանում:

«Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության ստանձնած առաքելությունը եւ նրա օգտաշատ գործունեությունը եւ ընդգծեց, որ այս շրջանում, երբ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների պատճառով խաթարվել է հայոց սահմանների անդրողը, տասնյակ երիտասարդներ են զոհվել եւ բազում հայրերի ներքին հարկադրված դարձել գաղթական, համադաշնության ղեկավար խորհրդի ժողովի անցկացումը Հայաստանում դիտարկվում է իբրեւ առանձնահատուկ ներդրում տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում:



խորհրդի անդամներին Նորին Սրբությանը ներկայացրեց տիար Կ. Նազարյանը՝ տեղեկացնելով, որ համադաշնությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում երեք ուղղություններով. դրանք արտակարգ իրավիճակներում օգնության մատակարարման, զարգացման եւ դիսկոնիայի ծրագրերի իրականացման, սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության ոլորտներում են:

Այնուհետեւ խորհրդի անդամների անունից խոսք ասաց «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության կառավարող խորհրդի համակարգող Սուշանն Ազարվալը (Հնդկաստան)՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ ընդունելության եւ օրհնության համար: Վերջինս, անդրադառնալով կազմակերպության առաքելությանը, նշեց, որ խորհրդի անդամները, ներկայացնելով տարբեր աշխարհամասեր, Զրիստոսի Ընդհանրական Եկեղեցու մաս են կազմում եւ իրենց ջանքերն են ուղղում արտակարգ իրավիճակների հետեւանքով տուժածների, ինչպես նաեւ աշխարհի զանազան հատվածներում տառապող ու չարաչարվող անձանց գորակցությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահա-

Գարեգին Բ Վեհափառը, ներկայացնելով Հայոց Եկեղեցու՝ ի գորակցություն Արցախի իրականացրած ծրագրերը, իր հայրապետական գնահատանքը փոխանցեց նաեւ ԵՀԽ «Կլոր սեղան» հիմնադրամին ու «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնությանը՝ վերջին օրերին Արցախի ժողովրդին ցուցաբերած նյութական աջակցության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տերը զորացնի Իր ս. Եկեղեցին, որպեսզի այսօրինակ մարդասիրական ծառայությունների շնորհիվ կերտվի առավել բարձր աշխարհ՝ խարսխված ազգերի, ժողովուրդների ու կրոնների միջեւ փոխադարձ սիրո ու համերաշխության վրա:

Չրույցի ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Սիրիայի ժողովրդին եւ հայ համայնքին Հայոց Եկեղեցու կողմից ցուցաբերվող գորակցությանը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե Ժ. վրդ. Անանյանը:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում նշվեց Երկրապահի օրը

Մայիսի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշվեց Երկրապահի օրը: Այս տարի այն համընկավ Երկրորդ ծաղկազարդի տոնախմբության հետ:

Երկակի արժեւորվող օրվա կապակցությամբ Միաձուլեց Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց

սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագից էր Մայր Աթոռի փոխդիվանապետ Պարթեւ վրդ. Բարսեղյանը:

Պատարագի ընթացքում հայր Պարթեւը, քարոզելով օրվա խորհրդի շուրջ, ներկայացրեց հրաշագարոջ Երկրորդ ծաղկազարդի խորհուրդը՝ ընդգծելով, որ այն, հաստատված լինելով հայ ժողովրդի հավատքի հայր ս. Գրիգոր Լուսա-

վորչի ձեռամբ, հատուկ է միայն Հայ Եկեղեցուն եւ հստակորեն բովանդակում է Միաձուլ փառավոր մուտքը Երկնային Երուսաղեմ:

«Այսօր տեսնում ենք, որ հրեշտակների բոլոր դասերը ցնծության բերկրանքի մեջ են, ինչպես մարդիկ այն ժամանակ, երբ Երուսաղեմում դիմավորում էին Զրիստոսի հաղթական մուտքը: Եթե այն ժամանակ մարդիկ էին դիմավորում Աստվածորդուն, ա-

պա հիմա արդեն հրեշտակներն են փոխարինել նրանց՝ Հիսուսին փառաբանելով իբրեւ Աստծու Որդու», - մասնավորաբար ասաց նա:

Իր խոսքում անդրադառնալով Երկրապահի օրվան՝ հայր սուրբը կարելուր նկատեց, որ արդեն մի քանի տարի է, ինչ Երկրապահներն իրենց համար նվիրական այս օրն սկսում են մասնակցություն բերելով Պատարագի սրբազան արարողու-

թյանը եւ վերանորոգում իրենց ուխտն Աստծու, Եկեղեցու եւ հայրենիքի առջեւ: Հայր սուրբը հավելեց նաեւ, որ հաղթության մայիսյան օրերը սոսկ թվականներ չեն, այլ շեն ու բարձր հայրենիքի խորհրդանշներն են հանդիսանում, իսկ հայ ժողովրդի՝ հավատքի ու ազատության համար մղված պայքարը մշտապես արդար ու աստվածահաճո է եղել:

Շարունակությունը՝ Էջ 3

Թնդրակյան շարժումը եւ նրա ղարազլուխներին դասադարձող գեղարվեստական համադասկերը Նովի. Շիրազի «Թնդրակեցիները» ղոնմում

Սկիզբը՝ թիվ 5-8

Համագգային այդ վտանգը ժամանակին հասկացել ու համանման երեւոյթների՝ քաղկեղոնականութան ու պավլիկյանների դեմ անհաշտ պայքար է մղել դեռեւս կաթողիկոս Յովհան Օձնեցին: Համամիտ ենք մերօրյա ուսումնասիրող պրոֆ. Յ. Մանուգարյանին, որը ճիշտ է բնորոշել աղանդավորական շարժումների հակապետական ու հակաժողովրդական քայքայիչ գործունեության քաղաքական ու սոցիալական բուն դրդապատճառները՝ դրանք համարելով ոչ այնքան սոցիալական կամ դասակարգային հակամարտության դրսեւորում, որքան արտաքին միջամտության՝ դրսի ուժերի հրահրման տիպոր հետեւանք:

Ի՞նչ է մեզ ուսուցանում հայ քաղաքական մտքի պատմությունը. «Հայտնի է, որ աղանդավորական գաղափարները,- գրում է քաղաքագիտության պրոֆեսորը,- սկիզբ են առել քրիստոնեական հիմնական գաղափարախոսությանը զուգընթաց՝ որպէս առանձին դոգմաների այլընտրանքային ըմբռնում: Սակայն դրանք հասարակական շարժումներ են դարձել եւ մեծ չափերի հասել հասարակական կյանքի ճգնաժամային պահերին: Որքան խոր են եղել ճգնաժամերը, այնքան կործանարար հետեւանքներ են թողել: Հայաստանում, օրինակ, 4-5-րդ դարերում սկզբնավորված բորբորիտների, մծղնեականների եւ աղանդավորական այլ շարժումներ ազգային պետականության գոյության կայուն պատմաշրջաններում աչքի չեն ընկել որպէս հասարակական շարժումներ, սակայն ազգային պետականության անկումից հետո նրանք գլուխ են բարձրացրել եւ դարձել հզոր շարժումներ հատկապէս 7-8-րդ դարերում աւրաբ-բյուզանդական աշխարհակալութիւնների շփման գծում՝ Հայաստանում» (Մանուգարյան Յ. Գ., Հայ քաղաքական մտքի պատմություն, գիրք Ա, եր., 2013, էջ 102):

Իսկ այնուհետեւ: Ի՞նչ է մեզ ստում պատմագիր Արիստակէս Լաստիվերցին թնդրական շարժման, նրա ողբալի հետեւանքների ու նրա պարագլուխների գագրելի շահատակությունների ու ազգընդդէմ գործունեության մասին.

«Շիրիկ կոչված բերդաքաղաքի մոտ, որի անունով մինչեւ օրս էլ ազարակն է կոչվում, ապրում էր Կունծիկ շնանուն մի աբեղա, որը ծերացած լինելով՝ իր մեջ պահում էր պղծության խմորը. սա սովորել էր մի շնաբար աբեղայից, որը իր մասին տարածել էր, թէ Աղվանքից է. բայց նա սատանայի անդրանիկն էր ու նրա գաղափարների շտեմարանը, ուստի նրա բերանից գեհեմի մշտաբորբոք ծուխ էր դուրս գալիս, որից շատերը թունավորվելով՝ խեղդամահ եղան: Այս Կունծիկը, սատանայի ժիր մշակը լինելով, որսաց Հրանուշ անունով մի կնոջ, որը նշանավոր ու պատվական ազգից էր, ազարակների տեր ու նրան էլ սահմանակից: Երբ Հրանուշը նրա մահաբեր թույնից վարակվեց, չբավականացավ միայն իր կորստյամբ, այլ շատերին էլ իրենց մոլորության գործակից պատրաստեց եւ առաջին հերթին իրեն տոհմակից երկու կանանց, որոնցից մեկի անունը Աննի էր, մյուսինը՝ Կամարա, որն արդարեւ սատանայի կամարարն էր. սրանք երկուսն էլ հարագատ քույրեր էին՝ պոռնկական մոլեգին ախտով, որը հատուկ է նրանց փարախին, եւ կախարդական հնարանքներով եղան սատանայի վարդապետներ, որոնց գերիշխեց բոլոր չարիքների հայրը» (ընդգծ.՝ Ս. Մ.):

Ով ինչ ուզում է ասի, ինչքան ուզում է թող արդարացնի՝ ա՛յս է պատմական բուն ճշմարտությունը այդ «առաջադէմ» հորջորջված շարժման ու նրա պարագլուխների մասին:

Պատմիչը, «չարիքների հայր» ասելով, անշուշտ, նկատի է ունեցել թնդրական շարժման գաղափարական առաջնորդ Սմբատ Չարեհավանցուն, որին, հակառակ պատմագիրների եւ Յովհ. Շիրազի, Վ. Դավթյանը ներկայացրել է բացառապէս դրական գծերով՝ որպէս ռաւակական ծագում ունեցող, իբր թէ մի հայ հոգեւորականի կողմից արաբին, ապա եւ մի «ուռում պատրիկի» ստրկության վաճառված ու ազատված, իրեն մերժած ինչ-որ անանուն իշխանուհու նկատմամբ ազնիվ սիրո բուռն ու անկեղծ զգացմունքներ դրսեւորած հարուստ ներաշխարհի տեր անձնավորության:

Հայկական հանրագիտարանում էլ, հույժ կարեւորելով, հարկ են համարել պատմական

Ճաղկոտն գավառի՝ այժմ ավերակ Չարեհավան քաղաքի առիթով գրել. «Այստեղ է ծնվել թնդրական շարժման հիմնադիր եւ ղեկավար Սմբատ Չարեհավանցին» (Ի. Յ. էջ 668): Սրանով չբավարարվելով՝ հանրագիտարանի հոդվածագիրը, հենվելով սկզբնաղբյուրների եւ պատմագիտական աշխատությունների վրա (Աշոտ Յովհաննիսյան, Սերոբ Պողոսյան եւ ուրիշներ), բավական ընդարձակ տեղեկություններ է հաղորդում նրա մասին՝ բնորոշելով անգամ նրա «սոցիալական ու փիլիսոփայական» հայացքները, որ ընկած են եղել թնդրական շարժման հիմքում: Այդ հոդվածում նշվում է նաեւ, որ Ս. Չարեհավանցու գործունեության եւ հայացքների մասին տեղեկությունները պահպանված են «նրա հակառակորդների գրվածքներում», որոնցից, «չնայած նրանց միակողմանիությանը, ակնառու է դառնում, որ նա իր ժամանակի աղանդավորական գաղափարների միավորմամբ ստեղծել է հակաֆեոդալական պայքարի ուսմունք»: Նրա «հակառակորդները» եղել են, ո՛չ ավել, ո՛չ պակաս, ժամանակի գեղարվեստական եւ փիլիսոփայական մտքի հսկաներ Գրիգոր Նարեկացին եւ Գրիգոր Մագիստրոսը, պատմիչներ Արիստակէս Լաստիվերցին, Սամվել Անեցին եւ ուրիշներ: Իսկ թէ նա բարեկամ պատմիչներ ունեցել է թէ ոչ, պատմության անհայտ է, եւ անկարելի է իմանալ՝ «բարեկամների» վերաբերմունքը թնդրականների մասին: Այս պատճառով էլ Նարեկացուն, Մագիստրոսին, Լաստիվերցուն միակողմանի կամ կողմակալ համարողները չեն բերել Չարեհավանցուն եւ թնդրականներին վերջիններիս տված բնութագրումները եւ առանց լուրջ փաստարկների՝ հայտնել են նրանց իբր առաջադէմ լինելը հիմնավորող, ապակողմարոշող տեսակետներ: Եվ վատն այն է, որ հենց ա՛յդ տեսակետներն են փոխանցվել նաեւ հին ու նոր օտար հայագետներին: (Իր «Բանալի ճշմարտության» երկը՝ ծավալուն ուսումնասիրության մեջ (ԵՊՀ հրատ., 2015, էջ 160-167) Ա. Օհանջանյանը բավական հիմնավոր աղբյուրագիտական քննությամբ ցույց է տվել, թէ ինչպէս են օտարները, մասնավորապէս՝ Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Կոկիբիը, ջանացել Սմբատ Չարե-



հավանցուն եւ թնդրականներին ներկայացնել այլ ժամանակներում կամ պատմական այլ դերակատարությամբ. «Ֆ. Կոկիբիը Սմբատ Չարեհավանցու անձի եւ ժամանակի հետ առնչվող խնդիրներին անդրադարձել է երկու հիմնական նպատակով: Առաջին՝ թնդրական աղանդը «հնացնել»՝ վերջինիս ծագումը տանելով վաղ շրջան՝ ընդհուպ մինչեւ 600-ական թվականները, եւ երկրորդ՝ ամեն գնով Սմբատ Չարեհավանցուն «դարձնել» ազնվագուն, մասնավորապէս, Բագրատունիների տոհմակից իշխան: Այս նպատակով հայագետը մի քանի վարկածներ է առաջարկում՝ մոռանալով իր ենթադրությունների ժամանակավիշակությունը»):

Գր. Մագիստրոսի «Թղթերից» «Թնդրակեցիները» պոնմի համար Յովհ. Շիրազի բերած բնաբան-քաղվածքը հետեւյալն է. «...յամենեցունց զթոյնս չարութեան ի մի վայր ժողովեալ հերձուածս, հավանեցան այնմ աստուածամարտ եւ ցանկապատառ դիվանովի անօրինին Սմբատայ օրէնս դնել...»:

Հարց կարող է ծագել. ինչո՞ւ Չարեհավանցուն եւ թնդրականների մասին նրանց հակառակորդ Գր. Մագիստրոսի այս, ինչպէս նաեւ մյուս մատենագիրների ու տարեգիրների համանման բնութագրումները շրջանցել են նրան արդարացնել ջանացողները, իսկ նրա ժամանակակից կամ հետագա բարեկամների կամ համակիրների կարծիքներ չեն հիշում իրենց աշխատություններում:

Շարունակությունը՝ էջ 4

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում նշվեց Երկրապահի օրը

Սկիզբը՝ էջ 2

Խոսելով հայկական սահմանի խաթարված խաղաղության եւ թշնամու սանձազերծած ռազմական գործողությունների մասին՝ պատարագիչ հոգեւորականն ասաց, որ այսօր նույնպէս հայ զինվորները սխրագործություններ են գործում՝ իրենց կյանքն ընծայաբերելով հայրենիքի համար, որովհետեւ Ավարայրի, Սարդարապատի, Շուշիի հաղթական ոգին է ապրում նրանց մեջ, նրանք դաստիարակված են հայոց քաջագուն նախնիների սուրբ գաղափարներով:

Պատարագի ավարտին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց նաեւ Հանրապետական մաղթանք՝ Հայոց աշխարհի սասանված խաղաղության վերականգնման համար:

Մինչ մաղթանքն սկսելն իր հայրապետական պատգամը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ հայոց համար մայիսը հաղթանակների հիշատակման ամիս է. Ավարայրի ճակատամարտ, Սարդարապատի հաղթանակ, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակ, Շուշիի, Արցախի ազատագրում: Խոսելով ապրիլ ամսին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Արցախի սահմաններին ծավալված սարդիչ գործողությունների եւ հայոց բանակի մարտիկների հերոսական դիմակայության մասին՝ Նորին Սրբությունն ընդգծեց. «Թշնամին կարծում էր, որ իր անակնկալ հարձակումով պիտի կարողանա իրականացնել իր նենգ ծրագիրը՝ հասնել նույնիսկ մինչեւ Ստեփանակերտ, բայց բախվեց հայ զինվորի աննկուն ու քաջարի ոգուն: Եվ այս միջադէպը՝ ճառագայթած հայրենասիրության այս ոգին, տարածվեց ողջ հայ կյանքի մեջ, համախմբեց ու մեկ

բռնեց դարձրեց մեր ժողովրդին: Յուրաքանչյուր հայորդի իր հնարավորությունների ու կարողությունների սահմանում ելավ իր հոգու պարտքը տալու հայրենիքի նկատմամբ, ելավ պաշտպան կանգնելու մեր երկրին, մեր սահմանների վրա ապահովելու մեր ժողովրդի խաղաղությունը:

...Մենք գիտենք մեր ոգու պարտքը տալ հայրենիքի նկատմամբ, անսասան կանգնել մեր հավատքի, մեր հայրենասիրության ու աստվածսիրության մեջ, պաշտպանել մեր երկիրը, մեր ազատ, խաղաղ, ստեղծագործ կյանքը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, գնահատանքով նշելով, որ այսօր բանակի զինվորների կողքին պարտքի բարձր գիտակցությամբ, հայրենիքի պաշտպանության սուրբ ու նվիրական գործին լծված հայ կամավորականներ են կանգնած, հրավիրեց Երկրապահի օրվա առիթով տաճարում համախմբված կամավորականներին եւ ժողովրդին համատեղ աղոթք բարձրացնելու երկինք, որպէսզի Աստծո Ս. Աջը հովանի լինի հայոց բանակի զինվորներին ու գորավարներին, որպէսզի թշնամու բռնն մի նենգ ծրագիր փշրվի մեր քաջարի ամենակի արի ոգու եւ հզոր կամքի ու բազկի դէմ:

Հայոց Հայրապետը մաղթեց, որ Աստծու օրհնությունը միշտ հովանի լինի Հայոց աշխարհին, եւ հայ ժողովրդի զավակները միակամ ու միասիրտ, առ հայրենին ունեցած սիրո ու պարտքի զգացումով ապրեն խաղաղ ու ստեղծագործ կյանքով:

Սրբագան արարողությանը ներկա էին Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ԵԿԿ վարչության անդամներ, մարզային խորհուրդների եւ տարածքային բաժանմունքների ներկայացուցիչներ, երիտասարդ եւ պատանի երկրպապաններ, բազում ուխտավորներ:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայոց Եկեղեցու պատմությունն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլը



Ապրիլի 30-ին, օրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նախաձեռնությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում անցկացվեց Հայոց Եկեղեցու պատմությունն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլը:

2015-2016 ուսումնական տարում՝ օլիմպիադայի տարածաշրջանային եւ մարզային փուլերը հաղթահարելուց հետո, հանրապետական փուլ

ներկայացավ ՀՀ մարզերի եւ Երեւանի հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների 115 աշակերտ:

Օլիմպիադայի մասնակից աշակերտները նույն օրը Մայր Աթոռի միաբան սարկավագների ուղեկցությամբ եղան Մայր տաճարում եւ այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ:

Արդյունքների հրապարակումից եւ գրավորների պարգաբանումից հետո տեղի ունեցավ մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում աշակերտների հանձնվեցին դիպլոմներ ու գովասանագրեր:

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Սիփան աբեղա Գեւորգյանը, ազատվելով Զիլիի հայոց հոգեւոր հովվի պարտականություններից, ծառայության է նշանակվել որպէս Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման (ՀԵԿԵՄ) հոգեւոր պատասխանատու:

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Ճանաչումից դեռի հասուցում

Պատմություն դարձավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, որը խորհրդանշական առումով վիթխարի նշանակություն ուներ մեր ժողովրդի համար: Դա նաեւ ջրբաժանն էր արդեն կատարված աշխատանքի եւ ապագայում կատարվելիքի:

Այն, որ 100-ամյա տարելիցը նախանշեց կարեւոր նոր մտահոգումների ու իրագործումների սկիզբը, փաստում է մեր օրերի ճանաչված պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի վերջերս լույս տեսած աշխատությունը:

Այն ունի թեմատիկային չափազանց բնորոշ վերնագիր. «Ցեղասպանություն եւ հայրենագրկում. ճանաչումից հատուցում»:

Աշխատությունը տպագրվել է ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, լույս է տեսել «Չանգակ» հրատարակչության կողմից: 440 էջ ընդգրկող աշխատությունը կառուցված է հոդվածների եւ հարցազրույցների ձևով եւ իր մեջ ամփոփում է մի օրգանական ամբողջություն: Առաջաբանում հեղինակը նշում է, որ վերջին հարյուր տարվա ընթացքում ինչպես հայ, այնպես էլ օտար մասնագետների կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ ստեղծվել է վիթխարի գրականություն, որն ընդգրկում է պատմագիտության, մշակութաբանության, սոցիոլոգիայի, հոգեբանության եւ այլ ոլորտներ: Ըստ նրա՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցից հետո, նոր պայմաններում, մեր մարտավարական ու ռազմավարական խնդիրները փոխվում են: Փաստորեն՝

ավարտին հասավ Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, որի մեջ հայությունը ներքաշվել էր վերջին հիսուն տարվա ընթացքում՝ իր կամքից անկախ, եւ որն ավարտվեց հաղթանակով: Ակադեմիկոս պատմաբանը շեշտադրում է հետեւյալը. «Ավելին՝ 2015 թ. ընթացքում նորանոր երկրների կողմից խորհրդարանական մակարդակով ցեղասպանության ճանաչման ու դատապարտման վերաբերյալ ընդունված բանաձեւերով ու հատկապես ապրիլի 12-ին Վատիկանում՝ Սուրբ Պետրոսի տաճարում, ի հիշատակ 1,5 միլիոն հայ անմեղ զոհերի հիշատակին Հռոմի Ֆրանցիսկոս պապի մատուցած պատարագից հետո, ճանաչման գործընթացն ավարտվեց եւ թեւակոխեց իրավաքաղաքական, այն է՝ հատուցման փուլ» (էջ 6):

Ուրեմն ներկա պայմաններում կարեւորագույն խնդիր է դառնում հատուցման պահանջի հիմնավոր բարձրաձայնումը, քանի որ Ցեղասպանության ծրագիրը մտահոգացրած եւ իրագործած երիտթուրքերի գլխավոր նպատակակետը հայությանը հայրենագրկելն էր իր իսկ բնօրրանում: Արեւմտահայաստանում: Ուստի հույժ կարեւոր է Հայոց ցեղասպանությունը դատապարտող միջազգային փաստաթղթերում, հատկապես խորհրդարանական բանաձեւերում «Արեւմտյան Հայաստան» հատուկ անուն արտահայտող տերմինի հիշատակումը, որը հստակ բացահայտում է այդ հրեշավոր ոճրագործության նպատակը՝ հայերին հայրենիքից զրկելու երիտթուրքական ծրագիրը:

Մինչդեռ այդպես չէ աշխարհի

շուրջ քսանհինգ երկրների խորհրդարանների կողմից ընդունված փաստաթղթերում, ուր որպես Հայոց ցեղասպանության իրականացման տարածք է հիշատակվում Օսմանյան կայսրությունը: Բացառություն են կազմում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի դաշնության, Կիպրոսի եւ Սլովակիայի ընդունած համապատասխան բանաձեւերը:

Պատմաբանի դիտարկումով՝ նման «բացթողումը» պատահական չէ: Դրանով մեծ տերությունները նպատակադրված խուսափում են 1920 թ. օգոստոսի 10-ին Սեւրում՝ Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) եւ պարտված Զառյակ դաշինքի խմբավորման անդամ Օսմանյան Թուրքիայի միջեւ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորություններից:

Աշխատությունում ընդգրկված են հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, վրացերեն, արաբերեն, թուրքերեն, պարսկերեն տպագրված հոդվածներ, որոնք վերոնշյալ առումով կարեւոր տեղեկատվություն են հաղորդում օտարալեզու ընթերցողներին:

Գրքում ներկայացված գործերի վերնագրերն իսկ պարզորոշ պատկերացում են տալիս սույն աշխատության համապարփակ ընդգրկումների եւ հստակ նպատակադրումների մասին: «Առաջին աշխարհամարտ - Հայոց ցեղասպանություն. պատճառներ եւ հետեւանքներ», «Հայ դատի խնդիրը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղեգծում», «Արեւմտյան



Հայաստան՝ Երգիր (պատմություն եւ արդիական խնդիրներ)», «Ցեղասպանութեան հարցը միջազգային ճանաչում խնդիր է», «Реальная граница положена Севером», «Вопрос признания Геноцида армян следует перевести в политико-правовое поле», «Армяно-турецкое граница незаконна», «Нам нельзя попадать в лавушки турецкой дипломатии», «Հատուցում պահանջելը նաեւ կանխարգելիչ գործողություն է», «Հայոց ցեղասպանությունը նաեւ պատրիոցիդ է», «Թուրքիան, ինչպես ցանկացած կայսրություն, դատապարտված է կործանման», «50 տարի մեր պայքարն ուղղվելով ճանաչմանը՝ եկանք հասնել հատուցման պահանջին» եւ այլ հրապարակումներ: Նրանցից յուրաքանչյուրում հայ դատի խնդիրը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, Ցեղասպանության ճանաչման եւ դրա դիմաց Թուրքիայի հատուցման հիմնահարցը բացվում, պարզաբանվում են մի նոր, թարմ՝ դեռեւս անսկատ մնացած կողմից եւ տեսանկյունից, որն էլ,

իր հերթին, մտածումի, իմացականության ու հետագա պայքարը շարունակելու ոգեղենությամբ տոգորում է հայ ընթերցողներին եւ հայ դատի ջերմ ու անկեղծ բարեկամներին:

Աշխատության էջերը թերթելիս պարզապես զարմանում ես, թե ինչպիսի հետեւողական ջանքերով եւ չտեսված ռեսուրսով պատմաբան Աշոտ Մելքոնյանը պայքարել է պատմության կեղծարարների դեմ՝ չերկնչելով որեւէ խոչընդոտից եւ երբեմն վտանգի տակ դնելով իր դիրքն ու պաշտոնը:


Այդպիսի մի պահ առաջացավ 2009-2010 թվականներին, երբ հրապարակի վրա էր հայ-թուրքական արձանագրությունների հիմնահարցը, որի հանդեպ հայ հասարակական շերտերի վերաբերմունքը տարամերժ էր, հակասական: Հայ պատմաբանների առաջատարը՝ Աշոտ Մելքոնյանը, չխնայելով իրեն ու իր պաշտոնական դիրքը, հենց սկզբից հստակորեն «ո՛չ» ասաց վերոնշյալ արձանագրություններին:

Շարունակությունը՝ էջ 5

Թուրքական շարժումը եւ նրա դարձվածքային համադրանքները հայկ. Շիրազի «Թուրքակեցիները» դրամում

Սկիզբը՝ էջ 3

Գուցե չէ՞ն եղել կամ ոչնչացվել են այդ աղանդի հետ միասին: Սակայն այդպես մտածելու հիմք առավել եւս այսօր չկա, քանի որ նորահայտ փաստերն ապացուցում են, որ Գր. Մագիստրոսի խոստացույն պատժիչ գործողություններից ու հալածանքներից հետո էլ այդ աղանդը Հայաստանից արմատախիլ չի արվել, չի ոչնչացվել եւ հարյուրավոր տարիներ թաքուն գոյատևել ու իր ավերիչ գործունեությունը շարունակել է որոշ վայրերում: «Հին» ու «նոր» թուրքակեցիները նույնական են իրենց դավանանքի ու գործելակերպի մեջ: Իզուր չէ 19-րդ դարի 30-40-ական թթ. հայտնաբերած եւ դատաստանի արժանացրած Հայ Եկեղեցին նրանց անվանել «նոր թուրքակեցիներ»: Իր մեկնագրության մեջ մերօրյա ուսումնասիրող Աննա Օհանջանյանը (*տե՛ս Օհանջանյան Ա.*, «Բանալի ճշմարտության» երկը, ԵՊՀ հրատ., Եր., 2015, 288 էջ) ոչ միայն ուշագրավ դիտարկումներ է կատարել, այլեւ իր գրքի հավելվածներից մեկում հրապարակել է «նոր թուրքակեցիների» վեց խոստովանագրեր, որոնք ոչնչով չեն տարբերվում Լաստիվերցու, Մագիստրոսի եւ հակաթուրքական մյուս գործիչների՝ այդ աղանդի կործանարար գործունեության հետեւանքների բնութագրումներից: Այսինքն՝ Ա. Օհանջանյանի մեկնությունը եւ նրանում հրապարակված վավերագրերը եւս հաստատում են, որ Հոյկ. Շիրազը սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ եւ իր բա-



նաստեղծական բնագրով ճիշտ է կողմնորոշվել պատմության թաղթադուկներում եւ հակառակ պաշտոնական գաղափարախոսության՝ ստեղծել է պատմական իրականության՝ արդիական հնչեղություն ունեցող գեղարվեստական համապատկեր:

Մենք աստվածաբանական-դավանաբանական ու փիլիսոփայական խնդիրների մեջ, իհարկե, չենք խորանալու, սակայն այդ վավերաթղթերը կօգտագործենք քաղվածաբար՝ կենտրոնանալով հատկապես Գյումրի քաղաքում եւ շրջակա Արիվալի, Բայանդուր, Զառու եւ այլ գյուղերում իր սկզբնավորումից շուրջ հազար տարի հետո էլ՝ մինչեւ 19-րդ դարի 30-40-ական թվականները գոյատևած այդ

աղանդից հրաժարվածների խոստովանագրերի այն արտահայտությունների վրա, որոնք առավել բնութագրական են թե՛ հին եւ թե՛ նոր թուրքական աղանդի հակաեկեղեցական, հակաքաղաքական ու հակահայ եղությունը հասկանալու տեսակետից: Եվ սրանք ոչ թե 9-11-րդ դդ. աղանդավորական շարժման վերելքի ժամանակների՝ համահայկական քրիստոնեական սրբությունները ոտնահարող, միայն իրենց դավանանքն ու հավատալիքները պաշտող սանձարձակորեն կատաղի, եկեղեցի եւ ընտանիք քանդող, հավատուրաց եւ ազգուրաց թուրքակեցիները չեն, այլ 19-րդ դարում թաքուն, ծպտված, գաղցնավոր, «հավածված» եւ, ի վերջո, մահվան սպառնալիքն ար-

համարիելով՝ «դարձի եկած», «զգացող» ու հոգեւոր իշխանությունից ներում հայցող «նոր թուրքակեցիներն» են:

Առաջին խոստովանագրում կարդում ենք. «Ես գիւմրեցի Կարապետ Մկրտչեան խոստովանիմ եւ յայտնիմ առաջի անդամոց Հոգեւոր Կառավարութեան Գիւմրոյ, որ ի 1837-ի Վարդավառին յունիս ամսեանն, գիւմրեցի Կիրակոսն Զասաբաբյան, ասուք եւ վկայուք, Փոքր Արիվալեցու իբր տիրացու Գեորգի սուրբ հաւատքն մոռացեալ էր եւ ինձ Կարապետիս այն Կիրակոսն քարոզեց, թե Զրիստոս Աստուծ չէ եւ ինձ հաւատացուց: Յայտնեմ եւ զայս, որ այն Կիրակոսն իւր տամբ, Թարգի Սարգիսն իւր տամբ, Դիլբանդ Մանուկն, Կաղզվանցի Գրիգորն իւր գերդաստանօք, Երկար Յակոբ, Կաղզվանցց Լւօն եւ ժողովելով սենեակն Կաղզվանցւոյ Գրիգորի երդուանք ի միասին, որ մեր խորհուրդն ամենսին յայտնեմք ումէք եւ մանաւանդ ինձ յայտնեցին եւ երդուցին, որ մի մարդի չյայտնեմ: Եւ այս է սուտ խարդաւանութիւնս ևոցա: Նախ ինձ հաւատացրին, թե Զրիստոս Աստուծ չէ, խաչին ինձ հայհոյել տուին, թե ոչինչ է, նաեւ հայոց մկրտութիւնս սուտ է եւ իւրեանց միւռնն, մեք կրկին պարտ եմք մկրտուիլ, որ մեր ճակատիցն գազանի մուկորն վեր գալ, ոչ դավանին Աստուածածինն կոյս, այլ ապականեալ, ոչ ընդունին զբարեխօսութիւնն նորա եւ այլ ամենայն, որ ինչքան սուրբ կայ չընդունին, եւ ոչ ևոցա բարեխօսութիւն, որ ըն-

դունին զպատարագն եւ ոչ զխաղաղութիւն եւ զխօստովանութիւն, այլ ասեն՝ քարե, փայտի խոստովանիր եւ Աստուծ թողու, նաեւ ով կամի հաղորդել, Նշխարն ուտեն եւ գինի վրեն խմեն, եւ պատարագի հաղորդութիւն ոչ ընդունին...

...Թե որպէս հաւատացեալ էի սուտ խաբէբայից, միայն ինչ խնդրեմ՝ ազատիլ այս չար ճանապարհէ: Եւ վասն ստոյգ լինելոյ իմ բաւկիս խոստանամ ճշմարիտն Աստուծ եւ առաջի կենարար խաչին նորա, որ այս իմ ասած բաներն վերոյիշեալ անձինքն ասեն, եւ ես իմ ստորագրութեամբ հաստատեմ:

1837, դեկտեմբերի 1, ի Գիւմրի» (Ազգային արխիվի ֆոնդ 56, ցուց. 1, գործ 56-ից Ա. Օհանջանյանի վերցրած ու հրապարակած գյումրեցի եւ արիվալցի «նոր թուրքակեցիների» այդ վեց խոստովանագրերն էլ ունեն համանման բովանդակություն. նույնիսկ վկայվում են նույն անձինք: Տե՛ս այդ խոստովանագիր վավերաթղթերը **Նրա նշված գրքի** Հավելված 1-ում, էջ 223-232):

Համանման պատկեր ենք տեսնում եւ մյուս խոստովանագրերում, ուր խաբված, դարձի եկած մարդիկ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր իշխանություններից ներումն եւ թողություն են հայցում: Ուրեմն՝ դարերը գրեթե ոչինչ չէին փոխել այդ կարծր աղանդի հավատալիքների մեջ: Խոստովանագրերի տեղեկությունները համեմատելով միջնադարյան մատենագրության վկայությունների հետ՝ տեսնում ենք սերնդեսերունդ պահպանված Զրիստոսի, Աստվածածնի, համաքրիստոնեական մյուս սրբությունների ուրացության ու մոլեգին ժխտման դրսևորումները:

Շարունակելի

Սամվել ՄՈՐԻՐԱՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Հայր պիտի ապրի՝ հակառակ դահիճներուն, եւ հակառակ իր առիծի աչքին տակ բուսած կորեկին:

Հայր պիտի ապրի ժողովուրդներու սիրազօդ մէկ օղակն ըլլալու համար...

Դ. ՎԱՐՈՒԺՆ

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո մեկ անգամ եւս համոզվեցինք, որ թուրքն ու ադրբեջանցին, որքան էլ թրծվեն քաղաքակրթության վառարանում, միեւնոյն է, իրենց նկարագիրը, դեմքը չեն փոխի, կմանա նույն գազանը, մարդկային արժեքներից զուրկ դահիճը... Այս թոհու-թուհում վերհիշում ես մեր ազգի պատմությունը, ետ նայում փուշ ու տատակով ծածկված ճանապարհին, ակամայից մտաբերում հին եւ նորօրյա հերոսներին, անդրադառնում նրանց կյանքին, ընթերցում նրանց խոսքերը...

Պատմության որոշ դրվագներ, ցավոք, կրկնվում են...

Հայ ազատամարտի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է նշանակություն ունի 1880-1890-ական թվականների ազգային-ազատագրական պայքարը, որի ռահվիրաներից էր Սարգիս Կուկունյանը: Նրա կազմակերպած արշավանքը ազատագրական առաջին փորձն էր, որը վիթխարի ազդեցություն ունեցավ, ոգեւորեց արեւելահայ եւ արեւմտահայ երիտասարդությանը՝ նրանց կտակելով հայոց նվիրական հողը միացած եւ ամբողջացած տեսնելու երազանքը: Սարգիս Կուկունյան մարտիկի պայքարը, աքսորը եւ տառապալից կյանքը կարծես յուրատեսակ քարոզչություն դարձան ժամանակակիցների համար: Նա մի ծիլն էր իր ծվատված եւ չարչարյալ ազգի, որի ազատագրումը հավատամք դարձրեց:

Սարգիս Մովսեսի Կուկունյանը (Ավետիսյան) ծնվել է 1866 թ. հունվարի 23-ին Նուխիի գավառի Նիժ գյուղում (այժմ՝ Ադրբեջանի Կուտակաշենի շրջանում): Նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: Նուխիի գավառի դպրոցների թեմական տեսուչ Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանի օգնությամբ պատանի Սարգիսը 1877 թ. ընդունվել է Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարան (**Գաբրիել Լա-**

ԼՈՒՅՍԻ ՃԱՆԱԴԱՐԿՈՎ...

գեան, Յեղափոխական դեմքեր. Մտաւորականներ եւ հայդուկներ, Հալեպ, 1990, էջ 285): Ընդունակ, ուսումնաստեղ է շրջահայաց Սարգիսը Հոգեւոր ճեմարանի առաջադեմ աշակերտներից էր, սակայն նա այդպէս էլ չի ավարտում այն («Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան». 1890-1950, Բոստոն, 1950, էջ 272): 1883 թ. աշակերտական խռովությունների պատճառով Գեորգյան ճեմարանից հեռացվում են շուրջ 80 աշակերտներ, որոնց թվում էր վեցերորդ դասարանցի Սարգիսը (դեռ Ավետիսյան ազգանունն էր կրում): Նա Էջմիածնից տեղափոխվում է Երեւան եւ փորձում ընդունվել Ուսուցչական սեմինարիա, սակայն չի հաջողում: Ապա տեղափոխվում է Թիֆլիս, մտնում զինվորական դպրոց. կարճ ժամանակ անց թողնելով այն՝ փորձում է ընդունվել Ներսիսյան դպրանոց: Սակայն Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությունը հեռացվածների մասին արդեն տեղեկացրել էր Ներսիսյան դպրոցի ղեկավարությանը: Սարգիսը որոշում է դիմել խորամանկության. խնդրագիր ներկայացնելով «Կուկունյան» ազգանունով՝ ընդունվում է Ներսիսյան դպրանոց եւ ուսանում Բաքվի «Մարդասիրական ընկերության» նշանակած ամսական 10 ռուբլի նպաստով: 1884 թ. ավարտում է Ներսիսյան դպրոցը («Յեղափոխական ալպում». Ազատագրական պայքարի յուշամատեն, Դ շարք, թ. 1 (37), Պէյրուբ, 1962, էջ 35):

1884 թ. Սարգիս Կուկունյանը մեկնում է Բաքու եւ մասնավոր դասեր տալիս: Ապա որոշում է գնալ Պետերբուրգ եւ ընդունվել մանկավարժական ինստիտուտ: Մտադրությունն իրագործելու համար նա դործյալ խնդրանքով դիմում է Բաքվի «Մարդասիրական ընկերությանը»: Վերջինս նկատում է, որ Սարգիս Կուկունյանն օժտված է մանկավարժին հատուկ կարողություններով եւ հմտություններով, ընդառաջում է, մանկավարժական կրթություն ստանալու համար ուղարկում Պետերբուրգ՝ նախապէս հոգալով ուսման ծախսերը: Երիտասարդ Կուկունյանը մեկնում է Պետերբուրգ, սակայն հուսախաբ է անում իր մեկենասներին. ընդունվում է համալսարանի իրավաբանական ֆակուլ-


տետ, իսկ երկու ամիս անց տեղափոխվում է արեւելյան լեզուների բաժին՝ որպէս ազատ ունկնդիր (**Կարինե Եղիազարյան**, Սարգիս Կուկունյանը եւ նրա գլխավորած արշավանքը. «Պատմա-բանասիրական հանդես», 2000, թ. 1, էջ 70): «Մարդասիրական ընկերությունը», տեղեկանալով այս մասին, Սարգիս Կուկունյանին զրկում է կրթաթոշակից, սակայն վերջինս չի հուսահատվում եւ սկսում է սեփական աշխատանքով իր կարիքները հոգալ:

Պետերբուրգում Ս. Կուկունյանը չփվում է ազատատեսէ երիտասարդների հետ, ծանոթանում նրանց հեղափոխական գաղափարներին: 1880-ական թվականներին հայ ուսանողությունը կենտրոնացել էր Մոսկվա եւ Պետերբուրգ քաղաքներում: Պետերբուրգի հայ ուսանողները որդեգրել էին շեշտված ազգային-քաղաքական ուղղություն («Հայրենիք», Պոսթըն, 1923, թ. 5, էջ 27). նրանք Երկիր (Արեւմտյան Հայաստան) մտնելու եւ հայերին թուրքական կեղծքի լծից ազատագրելու ծրագրեր էին մշակում:

Սարգիս Կուկունյանին հաջողվում է կարճ ժամանակահատվածում իր շուրջը համախմբել նվիրյալ երիտասարդների, սերտ կապեր հաստատել նշանավոր հայրենասեր, ժամանակի պետական-հասարակական ազդեցիկ գործիչ Կարապետ Եգյանի հետ: Վերջինս Կուկունյանի օգնությամբ կազմում է «Պետրոս Մեծի յարաբերությունները Հայոց հետ» վավերագրական ժողովածուն (**Գաբրիել Լազեան**, Յեղափոխական դեմքեր, էջ 286):

Կարինի 1890 թ. եղերական դեպքերը ողորդեցին հանրային ողջ հայությանը: Այս արյունալի իրադարձություններին հաջորդեց Գում Գափուի նշանավոր ցույցը՝ Կ. Պոլսում նույն թվականի հուլիսի 15-ին: Անհրաժեշտ էր համախմբվել, միավորվել եւ օգնել սահմանից այն կողմ գտնվող, սեփական հայրենիքում թուրք գազանից հոշոտվող եղբայրներին:

Կուկունյանը ձեռնամուխ է լինում ազգային-ազատագրական պայքարի կազմակերպմանը՝ նյութական միջոցներ է հայթայթում, գեներ գնում, կամավորներ հավաքագրում. հայրենասիրական գործունեությամբ կարճ ժամանակահատ-



վածում դառնում է ազատագրական պայքարի ակնառու գործիչներից («Յեղափոխական ալպում», էջ 37): Արշավախմբի գործունեության նպատակի մասին Ստեփան Ստեփանյանը (Ստեփան Ստեփանյանը (Ծերունի) արշավախմբի գլխավոր դերակատարներից էր եւ Կուկունյանին ճանաչում էր դեռեւս Գեորգյան ճեմարանում ուսանելու տարիներից (տե՛ս «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հտ. Ա, Պոսթըն, 1934, էջ 11) իր հուշերում գրում է. «Մենք պետք էր երթայինք Հայաստան, խմբեր կազմեինք, ժողովուրդին զինեինք եւ երբ պատրաստ ըլլայինք, ապստամբեինք Սասուն, Մուշ եւ Վասպուրական: Մեր պահանջը պետք է լինէր Բերլինի 61-րդ յօդուածի գործադրությունը» (անդ, էջ 40):

1890 թ. օգոստոսին Թիֆլիսում հրավիրված «Սահմանադիր ժողով»-ին մասնակցում էին տարբեր խմբակցությունների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ. որոշվում է հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող ուժերը միավորել եւ ստեղծել «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» (**Գ. Խուդինյան**, Սարգիս Կուկունյան. «Լրաբեր», 1989, թ. 11, էջ 29):

Հարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 4

Հայ հանրության ուշադրության առանցքում էր նրա հայտնի ելույթը ՀՀ Ազգային ժողովում 2009 թ. հոկտեմբերի 1-ին, որում շախշախիչ կերպով հերքեց արձանագրությունների կողմնակիցների բոլոր փաստարկումներն ու հիմնավորումները: Վերոնշյալ ելույթում ցեղասպանությանն առնչվող խնդիրների փուլերը ձեւակերպվեց այսպէս. «Ինձ հաճախ են քննադատում այսպէս կոչված պրագմատիկ հայրենասիրության դիրքերից՝ ասելով, թե ես խնդրին անդրադառնում եմ խիստ զգացական դիրքերից: Ուզում եմ հարցնել. ցեղասպանության խնդրին արդո՞ք զուտ զգացական խնդիր է, թե՞ ոչ: Եվ հաճախ այդ մարդիկ նաեւ հիշեցնում են, որ իրենք ցեղասպանության խնդիրը երբեք

չեն ուրանում: Մնացել էր միայն, որ ա՞յդ էլ ուրանային: Յեղասպանության խնդիրը Հայաստանում ուրացման խնդիր չէ, այն հզոր կռվան է հատուցման հարցն առաջ մղելու համար: Մենք պիտի ընդգծենք, որ մեզ ցեղասպանել են՝ հայրենիքից զրկելու համար: Յեղասպանության նպատակը հենց հայերի հայրենագրկումն է եղել: Եվ թուրքերը հասել են իրենց նպատակին՝ մեզ ցեղասպանելով, տեր են դարձել մեր հայրենիքին: Նշանակում է՝ այս արձանագրություններով նրանք ուզում են մեր հայրենագրկմանը տալ իրավական ձեւակերպում՝ սահմանը դնելու ճանաչել տալով: Սա նախապայման չէ, ապա ի՞նչ է: Հենց այս հատուցումից էլ վախենալով՝ Թուրքիան օր առաջ ուզում է փակել տարածքների վերադարձման

Ճանաչումից դեռի հասուցում

այդ խնդիրը» (ընդգծումը՝ Ա. Կ., էջ 276):

Պատմաբանն ազգային ժողովի բարձր ամբիոնից բացորոշ, առանց ձեւական պայմանականությունների, ուղղակիորեն բացականչում է. «Չեմ կասկածում, որ միայն տարիներ անց այս արձանագրությունների համար նույնքան կզոջանք ու կմոլկտանք, որքան 90 տարի առաջ կնքված չարաբաստիկ Կարսի պայմանագրի համար» (էջ 278):

Պատմաբանն աներկբա հավատում է հավատացնում է ուրիշներին, որ հողն ուղղակի պետք է այրվի թուրքերի ոտքերի տակ, որպէսզի նրանք հասկանան, որ հայությունն այս պայքարը տանելու է մինչեւ հաղթական ավարտ: Նրա խորին համոզվածությամբ եւ հիմնավորումով՝ Թուրքիան, ինչպէս յուրաքանչյուր բազմաէթնիկ կայսրություն, ի վերջո դատապարտված է կործանման, նույնիսկ եթե այն ինչ-որ չափով տնտեսական վերելք է ապրում: Այս թեմայով «Մեղիամքս» գործակալությունը տրված հարցազրույցում նա հետեւյալ թարմ, չորրորդած տեսակետն է հայտնում. «Թվում է, թե անպայմանորեն տնտեսական անկումն է եղադրում երկրի փլուզում, սակայն նույն տնտեսական զարգացումն իր հետ բերում է զարմանալի սեպարատիստական ձգտումներ, ինչ-

պէս օրինակ. Մեծ Բրիտանիայում: Նշանակում է՝ միայն նյութական չէ, անհրաժեշտ է հոգեւոր սնունդ: Թուրքիայում սոցիալական հողի վրա տեղի ունեցող բուստերը հաստատեցին, որ այստեղ սոցիալական խնդիրները դեռեւս լուծված չեն, եւ այդ բուստերը հնարավոր է վերածվեն ազգային հողի վրա կենտրոնական իշխանությունների դեմ համընդհանուր պայքարի, եւ դա կհանգեցնի թուրքական պետության փլուզման: Այս ամենը եկավ ապացուցելու, որ Թուրքիան շարունակում է կապել ոտքերի վրա կանգուն մնալ» (ընդգծումը՝ Ա. Կ., էջ 314):

Չնայած նման լավատեսությանը՝ հայ պատմաբանը բազմիցս ու բազմաթիվ ձեւերով զգուշացնում է, որ գործ ունենք թուրքերի հետ, ովքեր պատրաստ են նոր ցեղասպանության իրականացման, եթե հարմար առիթ լինի: Այդ պատճառով մենք իրոք դատապարտված ենք հաղթելու ցանկացած պատերազմում: Ըստ նրա՝ այդ առումով հատուցում պահանջելը նաեւ կանխարգելիչ գործողություն է: Յեղասպանության խնդիրը շոշափելը, հատուցման հարց բարձրացնելը նախետառաջ իիշեցնում են աշխարհին, որ գործ ունենք ցեղասպան երկրի հետ, որը 100 տարի անց էլ մտածարվում է իր պատմությունից, արտարի չէ հատուցել, ինչպէս քաղաքակիրթ աշխարհն ար-

դեն ցույց է տվել Գերմանիա-Իսրայել փոխհարաբերությունների պարագայում: Բազմաթիվ կարեւոր հարցադրումներ, առաջարկություններ, շեշտադրումներ ու նկատառումներ են առաջադրվում, մեկնաբանվում, քննվում ու քննարկվում սույն աշխատությունում, որը, իրավամբ, կարելի է համարել Հայոց ցեղասպանության, դրա թողած դասերի հաշվառման եւ հետեւանքների վերացման հատորյակ:

Եվ սույն հատորյակը շատ գիտելիքներ ու անհրաժեշտ տեղեկատվություն է հաղորդում հայ ընթերցողներին, բացի դրանից, եւ ամենից էլ կարեւոր, փոխանցում է հանուն հայոց պատմական անժամանցելի իրավունքների համար պայքարը հարատեւ շարունակելու ոգու եւ կամքի ուժն ու պատրաստակամությունը: Աշոտ Մելքոնյանն իր հեղինակած հատորյակի էջերից շարունակում է մեզ պատգամել, զգուշացնել այն մասին, որ հայրենիքի կորուստը եղադրում է նշանակում է ցեղասպանության շարունակություն: Ահա թե ինչու մենք պարտավոր ենք հաշվի առնել վերոնշյալ հորդորներն ու մտահոգությունները եւ մեր ձեռքին ու մեր գրասեղանին միշտ ունենալ այս, իրավ, ուշագրավ եւ հույժ արդիական գիրքը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Մարո ԱՆՁԱՆ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Սկիզբը՝ թիվ 7-8

Մյուս եղբայրս՝ Մուշեղը, միջահասակ, ուղիղ դիմագծերով, սեւ աչք-ունքով, քնքուշ հոգով մի երիտասարդ էր։

Յիշում եմ այսպիսի մի դեպք. եղբայրս՝ Մուշեղը, սարսափահար տուն մտավ եւ ասաց.

- Մա՛մ, տարան...,- արցունքների միջից խեղդված ձայնով ասաց նա։

- Զրդերը հարձակվեցին վրաս, ինձ մի լավ ծեծեցին եւ մեր եզներն ու կովերը տարան։

- Վա՛յ, աստված դրանց տուն ու տեղը ավիրի,- ասաց մայրս ծնկներին տալով ու տանից դուրս եկավ. ո՞ր, չիմացա։

Դրանից հետո մեզ մնաց մի կով՝ անունը Զիշմիշ, մի եզ՝ անունը Բաշո, երեք ոչխար եւ մեկ ավանակ։

Յիշում եմ՝ ամեն առավոտ մայրս հացը թխելուց հետո նախշուն խուրջինում դնում էր լավաշ հաց, խաշած ձու, ոչխարի ընտիր մածուն եւ բարձում էր ավանակին, ինձ էլ նստեցնում էր նրա վրա. գնում էինք հաց տանելու հնձվոր եղբայրներին։ Լճին մոտենալով՝ ավանակը կռացավ ջուր խմելու, մայրս ասաց.

- Մարո՛, հետ գնա, մի՛ կռանա։

Մինչեւ պատրաստվում էի հետ նստել, գլուխկոնծի տալով ընկա լճի մեջ։ Մայրս ինձ ջրից դուրս հանեց, վրայիս միակ շապիկը քամեց, իր գոգնոցը արձակեց, փաթաթեց ինձ։ Ապա իր թռչված չստերի միջի ջուրը թափեց, նորից հագավ եւ շարունակեց իր ճանապարհը։

Ինձանից մեծ եղբայրս՝ Մուրադը, մի օր դպրոց էր գնում, մյուս օրը՝ արտն էր հնձում, երրորդը օրը՝ հիվանդ էր։ Տարիներն իրար ետեւից անցնում էին, բայց երեխաները ոչինչ չէին սովորում։

Մուրադին էր հանձնված նաեւ իմ խնամքը, որն ինձ ավելի շատ ծեծում ու լացացնում էր, քան խնամում ու հետեւում։

Ես դեռ դպրոցական հասակում չէի, լի՛նեի էլ, միեւնույն էր՝ դպրոց չպիտի գնայի։ Մեր գյուղում միայն տղաներն էին դպրոց գնում։ Աղջիկը դպրոց... դա ամոթ ու խայ-

ԻՄ ԿՅՎՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

տառակություն էր համարվում։ Այստեղից էլ եզրակացություն՝ մեր գյուղի իգական սեռը անգրագետ էր։ Աղջիկները մեզ մոտ գլխաբաց էին, իսկ կանայք ու հարսները յազմա էին գցում գլխներին, տղամարդ տեսնելիս ծածկում էին դեմքերը։

Ես սիրում էի խաղալ թե՛ աղջիկների եւ թե՛ տղաների հետ, բայց մշտապես առաջնությունը տալիս էի տղաների խաղերին։ Նրանց խաղերն ավելի աշխույժ ու կրակոտ էին, ինչը խիստ համապատասխանում էր իմ կայտառ բնավորությանը։

Մայրս հաճախ ասում էր.

- Մարոս պետք էր տղա ծնվեր. թոնիրի շիշը, որ կոխես բերանը, չի վախենա։

Տղաների հետ ամբողջ օրը ժայռերի հետեւում պահմտոցի էի խաղում, «ծի» էի նստում եւ փողոցում վազվզում։ Մեր ձիերը ոչ այլ ինչ էին, քան մեր տներից բերված ցախավելներն ու ավելները, որոնցից իսկական ձի բշտելու հաճույք էինք ստանում։ Տղաների հետ մեր լճում լողանում, ապա նրա ավագոտ ավերին նստած՝ աղջիկներով տուն-տուն էինք խաղում։

Մայրս հարեանի մեծ թավան բերեց եւ քառասուն ձվից ձվածեղ պատրաստեց։ Այդ տեսնելով՝ լաց եղա.

- Մամա՛, սոված եմ, ձվածեղ եմ ուզում։

- Ձվածեղը կտրել չի կարելի, մի քիչ սպասիր, սա տանեմ քավորոջ կնոջ բարձին, հետո քեզ համար նոր ձվածեղ կեփեմ,- ասաց մայրս ու շտապեց քավորակնոջ տունը, որը կից էր մեր տանը։

Զգիտեմ՝ մայրս երբ տուն դարձավ, բայց ես արդեն քավորակնոջ տանն էի եւ հայացքով տնտղում էի նրա բարձի չորս բուրդը, բայց ոչ մի ձվածեղ աչքիս չերեւաց։ Քավորակինը, ինձ նկատելով, ասաց.

- Խաչոյի՛ն ես ուզում, հա՞, գնա լճափ, նա այնտեղ խաղում է։

Ես տեղիցս չշարժվեցի, բերանիս թուրք կով տալով, մինչեւ ականջներս կարմրելով՝ ասացի.

- Քավորակի՛ն, մամաս մեր ձվածեղն ուզում է։

Քավորակինը գլխի ընկավ, թե բանը

ինչն է, կտրեց դեռ չկտրված ձվածեղը, մի մեծ կտոր փաթաթեց լավաշի մեջ ու ինձ մեկնեց։ Ես առանց առարկելու՝ այն վերցրի եւ լճափը վազեցի։ Ավագներին նստած՝ ձվածեղը կերա եւ տիկնիկներին էլ բաժին հանեցի ու խաղով տարված՝ էլ տուն չգնացի։ Քիչ հետո լսեցի մորս ձայնը.

- Մարո՛, Մարո՛, արի ձվածեղ կեր։

Տարված խաղով՝ մորս չարձագանքեցի եւ տեղիցս չշարժվեցի։ Քիչ հետո մայրս ինձ մոտեցավ եւ նկատեց տիկնիկներիս առաջ դրված ձվածեղը։ Սկսվեց հարցաքննությունը։ Ես միամտաբար ամբողջ եղելությունը պատմեցի. նա մի քանի հարված հասցրեց մարմնիս փափուկ մասերին, ձեռքիցս բռնեց՝ տուն տարավ, նորից մի քանի ապտակ հասցրեց։ Ես բարձր ձայնով լալիս էի։ Բարկությունից սկսեց սենյակի երկարությամբ գնալ ու գալ ու ինձ սաստող խոսքեր ասել։ Ապա ինձ մոտենալով՝ ասաց.

- Լեզուդ հանիր տեսնեմ։

Ես առանց բանի եւությունը հասկանալու՝ լաց լինելով լեզուս հանեցի։ Նա մի բան ցանեց լեզվիս վրա ու ինձ տուր տալով ասաց.

- Այս քեզ խրատ, որ մյուս անգամ առանց ինձ ասելու՝ ուրիշից ոչինչ չուզես, հասկացա՞ր։ Այս անգամ բիբար լցրի, մյուս անգամ, եթե կրկնվի, լեզուդ կկտրեմ եւ շների առջեւ կգցեմ, հասկացա՞ր։

Ես լալիս ու ճչում էի։ Չանդարտվելուց հետո նա ինձ գրկեց, գետնից բարձրացրեց, ծնկներին դրեց եւ սկսեց արտասուքներս ու լեզուս սրբել, միաժամանակ կրկնելով՝

- Էլ այդպիսի բան չանես։

Անտանելի անկարգ ու չար աղջիկ էի։ Մի օր ընկերներիս շորերն էի լիճը գցում, մյուս օրը հարեանի փռած չորթանն էի հավաքում ու քարի փոխարեն նետում լիճը։ Ընկերներիս ծեծում ու արնոտում էի։ Մի խոսքով՝ օրական երեք անգամ մորս կողմից ծեծվում ու էլի չէի խրատվում։

Եղբայրներիցս մեկի՝ Առաքելի հարսանիքն էր։ Մեր մեծ սենյակի մի անկյունը վա-



Մարո ԱՆՁԱՆ

րագույրով կտրված էր։ Վարագույրի մյուս կողմում հարսանիք էր. կին ու աղջիկ, տղամարդկանց հետ թեւ թեւ տված, ավանդական զուռնայի նվագի տակ պարում էին, իսկ ես ընկերուհուս հետ վարագույրի հետեւում պահմտոցի էի խաղում։ Այստեղ էր նաեւ հարսը՝ երեք տակ գույնզգույն շղարշներով ծածկված։ Ես մոտեցա եւ բարձրացրի հարսի երեսի ժողը։ Չարսը ինձ նայեց, երեսս շոյեց, ժպտաց եւ հարցրեց.

- Անունդ ի՞նչ է։

- Մարո։

- Մարո՛, ինձ կարո՞ղ ես տանել ձեր ու տատեղը։

- Կարող եմ,- պատասխանեցի ես։

Կլոր թմբուկը վիզս գցած, կոպալները՝ փայտիկները ձեռքիս՝ հարսին առաջնորդեցի ուտատեղը։ Նա նստեց թե չէ, տրամադրությունս բարձրացավ եւ սկսեցի փայտիկներով թմբուկին հարվածել ու հետն էլ երգել։

Շարունակությունը՝ էջ 7



Աղաբանի
Թուխմանուկ
եկեղեցին

Սկիզբը՝ թիվ 7-8

Քուչակյան տաղաշարքում եւս հանդիպում ենք այնպիսի հայրենների, որոնցում արտացոլված է «սիրո տեր» կտորիճի մահվան փաստը։ Ահա դրանցից մեկը.

Մահալօքս ի վար կուզի

Նա տեսայ մոմեր գատրած.

Ի յան մոմերուն տակն

Սիրոյ տեր Մանուկ մ'եր

պառկած.

Մոմն ալ դեմ հայրեն ասաց

Ողորմած մ'սրտեն իլաց.

-Մերն կտորիճն ուներ,

Կրակն իմ գլուխն է վառած։

(Ա. Զոպանյան, Չայրեններու բուրաստանը, էջ 227)։

Մի ուրիշ հայրենում բանաստեղծն իր խոհերն է արտահայտում կյանքի անցողիկության մասին.

Մահալօքս ի վար կուզի, նայ

տեսայ չոր գանկ մի պառկած.

Ոտօքըս թափալ տըլի, նա

երեսս ի վայր ծիծաղաց.

Դարձաւ պատասխան երեստ՝

«Ի՛նչ կ'անես, կրտորճ շփացած.

Երեկ քեզի պէս էի, այսօր զիս

այս հալս է ձըգած»։

(Նույն տեղում, էջ 367)։

Միջնադարյան ժողովրդական մի երգում՝ «Վիճաբանութիւն երկնի եւ երկրի» (տե՛ս Ա. Մաքականյան, Չայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 381, Ներսէս Մոկացուն վերագրված այս երգը գիտնականը համարում է ժողովրդական ստեղծագործություն), նույնպես հանդիպում ենք կտորիճի մահվան պատկերին։ Այս երգը երկխոսություն է երկնքի եւ երկրի միջեւ, այն մասին, թե այս երկուսից որին է առավելությունը։ Երկինքը մեղադրում է երկրին, որովհետեւ նա երիտասարդ կյանքեր է ամփոփում իր մեջ.

Երկինքն գետնին ասաց.

-Բան ունիմ քան զքեզ աւելի.

Ուր աղէկ կտորիճ մ'որ կայ,

Գայ ի քո ներքեւ զնտանի։

(Նույն տեղում, էջ 384)։

ԹՈՒԽԱՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

Վերջում բանաստեղծը խորհուրդ է տալիս իր ունկնդիրներին.

Մանկո՛ւնք, Դուք աճափ արեք,

Այդ աճափդ է զարմանալի։

Դուք այլ ցածացէ՛ք, մանկտի՛ք,

Ու գլուխ դրեք ի գետնի.

Քան գերկինքն ի՛նչ բարձր կայ,

Որ գլուխ եղիր ի գետնի,

Այսօր վրան կու քայլենք,

Վաղն մտնուք ներքեւ գետնի։

(Նույն տեղում, էջ 385)։

Վերոհիշյալ երգերում չի հիշատակվում մենտոլ երիտասարդի ով լինելու եւ մահվան պատճառի մասին։ Բայց մենք կարծում ենք, որ այս երգերի քնարական հերոսը հայրենիքի համար զոհվող, թշնամուց խոցված կտորիճ-Ֆետան է, որի համար կյանքից, սիրուհուց ավելի թանկ հայրենի հողն ու արժանապատվությունն են։ Այս գոհված կտորիճներն են, որ մեր ժողովրդի մեջ վառ են պահել արդար վրեժխնդրության զգացումները։ Եվ դարեր շարունակ նահատակված Ֆետաների քաջագործությունների ու կարոտի երգը շուրթերին՝ գալիք սերունդները կտորիճների արյան կանչով զինվորվել են ու նրանց օրինակով պաշտպան կանգնել հարազատ երկրին ու ժողովրդին՝ մահը գերադասելով անպատիվ ապրելուց։

Մեր ժողովրդի պատմության տարբեր էտապներում, տարբեր

անուններով են հիշվել երիտասարդ, նվիրյալ զինվորները։ Յեթանոսական շրջանում նրանք կոչվել են թուխեր, աղեկներ, մանուկներ։ Ավարայրի քաջերը՝ նահատակներ։ Ավելի ուշ՝ արաբական տիրապետության շրջանից սկսած, մեր զինավառ երիտասարդները կոչվել են կտորիճներ, ապա՝ մանկտի-մանկտավագներ ու Ֆետայ-Ֆիդաներ։

Մեր ժողովուրդն իր նորածիլ, նվիրական զավակներին խիստ բնութագրական անվանումներ է տվել։ Մեր բառարաններում հանդիպում ենք այս անունների բացատրություններին։

«Մանկտի», «կտորիճ», «նահատակ», «Ֆետայ-Ֆիդա-Ֆըդե» բառերն ունեն քաջ, երիտասարդ, զինվոր, նվիրյալ, զոհ, մատաղ իմաստները։

Ողբերգական այն է, որ հիշյալ երիտասարդ քաջերի համար ի վերուստ սահմանված է մի դաժան ճակատագիր, որի պատգամն է՝ գիտակցաբար ընդառաջ գնալ մահվան։ Եվ դարեր շարունակ հայ նվիրագործված երիտասարդներն ընդունել են իրենց ճակատագիրը։ Իսկ ուշ միջնադարում արդեն նրանք կոչվել են միայն Ֆետաներ՝ զոհեր, մատաղներ։ Այդպես էր պահանջում ազգի վիճակը։ Օտարների լծի տակ կքած հայ ժողովրդին Ֆետա զինվորներ էին պետք։ Եվ

այդ զինվորները՝ իրենց անունն ու կոչումը անցյալից ժառանգած, պիտի կռվեին Մշո դաշտում, Սասնո լեռներում... Երբ այսօր կարդում ենք մերօրյա նահատակ-Ֆիդայիների երդումը, («Երդվում եմ չամուսնանալ, չսպիրվել, ընտանիքիս գիրկը չդառնալ, մինչեւ չազատագրենք մեր սուրբ հողերը՝ Մուշը, Աստուկը, Նախիջեւանը...») արդեն հասկանալի է դառնում, թե մեր միջնադարյան կտորիճներն ինչու էին «մորուսագալի» կոչվում։

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, վերարթնացում է տեղի ունեցած ժողովրդի մեջ։ Մեր հեթանոսական աստվածները հայ ազգի մեջ հավերժորեն դրեցին անձնագոհության, կտորիճության, Ֆետայության ոգին եւ պատգամեցին հավատարիմ մնալ այդ ոգու կանչին։ Եվ ոչ մի կրոն ու դավանք չեն կարողանալու այն հանել մեր միջից։ Չայ ժողովրդի համար օրհասական պահերին մեր մանկտիք, Ֆետաները էլի պիտի զինավառվեն ու ոտքի կանգնեն, ինչպես եղել է հնում, ինչպես եղավ մեր օրերում եւ այսօր։

Վարդան ԵՐԻԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ.
թեկնածու, դոցենտ

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երեք հանրահայտ ավագակներ են լինում: Սրանք բազմաթիվ վայրերում անհաշիվ չարիքներ են գործում: Մի անգամ գալիս են մի վանք ու կերակուր խնդրում: Սակայն վանքի վերակացուն խիստ խոսքերով կշտամբում է սրանց՝ ասելով.

- Դուք արևախում գող ու ավագակ եք, ոչ միայն չեք ամաչում այլոց վատակը հափշտակելուց, այլև համարձակվում եք անամոթաբար Աստծո ծառաներին տրված ողորմությունն էլ ուտել: Արժանի չեք, որ հողն անգամ ձեզ տանի, քանզի ո՛չ Աստծուց եք երկյուղում, ո՛չ էլ՝ մարդկանցից ամաչում: Հեռու գնացե՛ք ձեր չար գործերով հանդերձ եւ այլեւս չհանդգնեք վերադառնալ այստեղ:

Իսկ սրանք գայրացած, խիստ սրտմտած ետ դարձան:

Եվ ահա նույն օրը վանահայրն ինչ-որ տեղից վերադառնում է՝ հետն ունենալով մի քանի նկանակ եւ մի շիշ գինի, եւ վերակացուից լսելով, թե ինչպիսի պատասխան էր տվել ավագակներին, հանդիմանում է նրան՝ ասելով.

- Անիրավություն ես արել, քանզի մեղավորները մարդասիրությամբ եւ քաղցրությամբ ավելի հեշտ են դարձի գալիս, քան սպառնալիքներով ու խստությամբ, որովհետեւ Քրիստոս Աստված՝ Վարդապետը մեր, Ում Ավետարանը խոստացանք պահել, ասել է.

- Բժիշկն ամողջների համար չէ, այլ՝ հիվանդների: Ես չեկա կանչելու արդարներին, այլ՝ մեղավորներին: Այդ պատճառով էլ հաճախ մեղավորների հետ էի սեղան նստում: Եվ քանի որ դու դա արել ես սիրո եւ Քրիստոսի պատվիրանի դեմ, որպես սուրբ հնազանդություն, հրամայում եմ քեզ, որ հենց հիմա վերցնես այս նկանակն ու շշով գինին, անմիջապես փնտրես ավագակներին ու նրանց գտնելով՝ նվիրես իմ անունից: Եվ հետո՝ ծուկի իջնես նրանց առաջ, խոնարհաբար խոստովանես քո հանցանքը, որ նման տրտմությամբ ու խստությամբ վարվեցիր նրանց հետ: Հետո կաղաչես նրանց, որ այլեւս նման չար գործեր չանեն, այլ երկյուղ ունենան Տեր Աստծուց եւ ընկերներին էլ վնաս չտան: Եվ եթե հետեւեն քո ասածներին, խոստանում եմ բոլոր նրանց մարմնական պետքերը հոգալ: Այս կասես նրանց եւ այնտեղից կվերադառնաս:

Եվ երբ վերակացուն գնաց ավագակներին փնտրելու, վանահայրը եկավ աղոթելու Աստծուն, որպեսզի նրանց զոջման ու ապաշխարության դարձնի:

Արդ, երբ ավագակներն ուտում էին այն ողորմությունը, որն ուղարկել էր նրանց Աստծո մարդը, սկսեցին միմյանց հետ խոսել՝ ասելով. «Վա՛յ մեզ՝ եղկելիներին եւ թշվառներին, որքան դժոխքի մեծ ու անտանելի տանջանքներ են մեզ սպասում, որ ոչ միայն կողոպտում ենք մարդկանց, այլև զրկում կյանքից եւ այսքան մեծամեծ չարիքներից եւ մարդասպանություններից հետո ամենեւին ո՛չ Աստծուց երկյուղ ունեցանք եւ ո՛չ էլ՝ խիղճ:

Իսկ ահա այդ սուրբ եղբայրը, որ եկել է մեզ մոտ, այնքան չնչին մի բանի համար, որ մեզ արդարորեն, մեր իսկ չարությունից դրդված հանդիմանել էր, իրեն այսքան խոնարհեցրեց եւ դատապարտեց մեր առջեւ, ավելին՝ նման առաքինի եւ սուրբ այրը նաեւ մեզ առատ խոստումներ պարգեւեց, հաց ու գինով մեր պետքերը լցրեց: Արդարեւ, սրանք են սրբերն Աստծո, որոնք երկինքը պիտի ժառանգեն: Իսկ մենք՝ կորստյան որդիներս, օրըստօրե ավելացնում ենք հավիտենական դժոխքի մեր տանջանքերը եւ չգիտենք՝ կարո՞ղ ենք ողորմություն գտնել Աստծուց՝ այսքան չար ու զազիր մեր գործերի համար:

Երբ նրացից մեկը նման բաներ էր խոսում, մյուս երկուսն ասում են. «Այդ դեպքում ի՞նչ անենք»: Եվ նա ասում է. «Գնա՛նք Աստծո մարդու մոտ եւ թող նա մեզ հույս տա, որ մենք՝ նման չարագործներս, կարող ենք ողորմություն գտնել Աստծուց: Մեզ մի անգամ պատվիրածը կանե՛նք, միայն թե կարողանանք մեր հոգիներն ազատել դժոխքի գեհեկից:

Հավանություն տալով սրան՝ երեքն էլ մեկ առ մեկ գնում են Աստծո մարդու մոտ, ասում.

- Հա՛յր, մենք մեր մեծամեծ չարագործությունների պատճառով տարակուսանքի մեջ ենք՝ արդո՞ք կարող ենք Աստծուց ողորմություն գտնել: Բայց եթե դու մեզ հուսադրես, թե Աստված երես չի դարձնի մեզնից, պատրաստ ենք քեզ մոտ ապաշխարելու, եւ այն ամենը, ինչը պատվիրեցիր մեզ, հնազանդորեն կկատարենք:

- Աստծո մարդը նրանց սիրով ու քաղցրությամբ ընդունեց եւ զանազան ապացույցներ բերելով՝ հավաստիացրեց Աստծուց մարդասիրություն գտնելու մասին: Ինչպես նաեւ խոստացավ Տեր Աստծո շնորհն ու ողորմությունը գտնելու մասին՝ ուսուցանելով նրանց, թե որքան մեծ է Աստծո մարդասիրությունը մեր անթիվ մեղքերի դեմ: Չնայած դրանք անսահման են, հաղթահարվում են եւ թաքցվում, ու մանավանդ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեղավորների համար աշխարհի եկավ, որպեսզի փրկի նրանց:

Արդ, ավագակները, հրաժարվելով աշխարհից ու իրենց չար գործերից, ընդունելի եղան Տեր Աստծուն եւ Նրանով զգեստավորվեցին ու սրտով կենդանացան: Նրանցից երկուսը կարճ ժամանակի ընթացքում գովելի վարք ձեռք բերեցին, հրավիրվելով Տիրոջից՝ այս աշխարհից տեղափոխվեցին: Իսկ երրորդը երկար ապրեց եւ մշտապես, մտովի անցկացնելով իր ծանր ու զանազան մեղքերը՝ անչափ ապաշխարեց: Ընդհուպ հիսուն տարի՝ որքան, որ ապրում էր, հացով ու ջրով էր միայն անցկացնում, միշտ բոկոտն էր շրջում եւ գիշերն աղոթքի կանգնում, մինչեւ լույս չէր քնում: Եվ նման ճգնասեր առաքինության, հրեշտակների առաջնորդությամբ առ Աստված տեղափոխվեց:

**«Հայելի վարուց»
Փոխադրությունը՝ Ա. Ս.-ի**



Մարո ԱԼԱԶԱՆ

ԻՄ ԿՅՎՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 6

Այդ ժամանակ մեր տուն եկավ հորեղբայր Հակոբը: Ինձ տեսնելով՝ ասաց.

- Աղջի՛ փիչխե, տուն կորի՛, թե չէ գայլերը քեզ կուտեն:

- Ես մենակ չեմ, հարսը ուտատեղումն է, պատասխանեցի ես: Դրանից հետո թե ինչ զգաց խեղճ հարսը, չգիտեմ (խեղճ հարսը մեծերի հետ խոսելու իրավունք չունեց, դրա համար էլ ընկավ իմ թմբուկի հարվածների տակ):

Հետագայում ես մորս խոսակցությունից հասկացա, որ հարսին ոչ թե եղբայրս, այլ մայրս էր տեսել ու հավանել: Պարզվեց նաեւ, որ խեղճ եղբայրս առանց հարսին տեսնելու ու ճանաչելու՝ նրա հետ եկեղեցի էր գնացել՝ պսակվելու: Այսպիսին էին մեր գյուղի բարբերը:

ԹԱՎԱՔՅԱԼԵՆՆ ՏՈՒՆԸ

Մեզ երկու ազգանվամբ էին կոչում՝ Թավաքյալենց եւ Մուրադենց: Թավաքյալենքը հայտնի էին Վանում, Ալեքսանդրում եւ մեր գյուղում: Թե ինչով էին նրանք հայտնի՝ չգիտեմ: Թավաքյալանները երեք եղբայրներ են



եղել՝ Մուրադ, Հակոբ եւ Գրիգոր: Երեքն էլ իրենց ընտանիքներով ապրում էին մի բակում, որը կից էր մեր լճին:

Բաբեր (հորեղբայր) Գրիգորը երեխաներ չունեց, նրանց ընտանիքը շատ փոքր էր: Իսկ բաբեր Հակոբի ընտանիքը 150 հոգուց էր բաղկացած, որոնք բոլորն էլ ապրում էին նույն հարկի տակ, եւ ընտանիքի ղեկավարն էր մելիք Հակոբը (այսպես էին կոչում նրան): Նրան տեսնելիս՝ բոլոր հարսներն ու կանայք ծածկում էին դեմքերը. նրա հետ նաեւ չէին խոսում: Իսկ տղամարդիկ շատ հարգանքով ու պատկառանքով էին նայում նրան:

Ասում էին, որ նրա մի ոտը Վանում, մյուսը Ալեքսանդրումն է: Ասում էին նաեւ՝ կարդացվոր է եւ շատ խելոք, եւ որ նրան գիտեն ամբողջ Վանն ու Ալեքսանդր: Նրա հազուստը քաղաքային էր՝ մշտապես կոկիկ ու մաքուր: Նա բարձրահասակ, թիկնեղ, սեւ ու խոշոր աչք-ունքով՝ 60-ից անց մարդ էր:

Երկար տարիներ են անցել, բայց հիշողությանս միջից մի դեպք չի ջնջվում, չի աղոտանում: Բաբեր Հակոբը բակում քարին նստած կարդում էր: Ես մեկ նրա գրքին, մեկ էլ նրա «Երկար» ոտներին էի նայում, որից մեկը Վանում, մյուսը Ալեքսանդրումն էր, եւ հանկարծ ոտքս քարին խփելով՝ երեսնվայր ընկա: Նա, ինձ բարձրացնելով, ասաց.

- Վա՛յ, Մարոն ոսկի գտավ:

Ես անմիջապես լացս կտրեցի եւ շուրջս նայեցի, բայց ոչ մի ոսկի չգտա:

Բաբեր Գրիգորը նույնպես բարձրահասակ, թիկնեղ, խաժ աչքերով, գեղեցիկ մարդ էր, սակայն իր շրջապատում այնքան էլ ազդեցիկ չէր:

Մուրադի՛ իմ պապի մասին ոչինչ գրել չեմ կարող, ես ո՛չ նրան տեսել, ո՛չ էլ նրա մասին լսել եմ:

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ամառվա շոգ եւ արեւոտ օր էր: Մենք՝ երեխաներս, ոտաբոքիկ, առանց շապիկի՝ լճափի ավազներում թաղված, տուն-տուն էինք խաղում:

Հանկարծ մթնեց, աքաղաղները կանչեցին, հավերը կչկալով իրար անցան ու աքաղաղների շուրջը հավաքվեցին: Շները հաչալով՝ չարագուշակ ոռնացին: Ձրտեց: Մենք մրսեցինք եւ մեր շապիկները հագանք: Լճի կապույտ գույնը սեւի փոխվեց, լիճն սկսեց կնճռոտվել եւ ավելոծվել: Այս բոլորը ահ ու սարսափ տարածեց մեզ վրա. մենք, խաղը թողած, տները վազեցինք: Մեր սենյակում պատից կախված լամպը վառվում էր: Մայրս եւ մի քանի կանայք ծնկաչոք, ձեռքերը վեր պարզած, հայացքն առաստաղին՝ աղոթք էին մրմնջում:

- Աստվա՛ծ օհն, մեզ ազատիր բոլոր տեսակի չարիքներից,- ասում էր մայրս:

- Արեւի խավարումը երկու թագավորների անհաշտության նշան է, կարող է պատերազմ լինել,- ասաց կանանցից մեկը: Մյուսը թե՛

- Արեւի խավարումը գլխավորի՝ ամուսնու կորուստ է նշանակում: Հիշո՞ւմ ես՝ մի անգամ էլ արեւը խավարեց՝ Բղբենուց Հարությունը մահացավ, եւ խեղճ Մարիամը այրիացավ:

- Չեմ հիշում, դա արեւի խավարման, թե հետագա օրերումն էր, որ Սիփանի փեշերով եւ լճի երկարությամբ, դեպի մեր գյուղն էր շարժվում թուրքական բանակը՝ սեւ ասկյարը (այդպես էին կոչում թուրքական բանակին, նրա համար, որ նա ամբողջովին սեւ էր հագնում), որի միայն սկիզբը տեսանք:

Ժողովուրդը՝ կին, երեխա, տղամարդ, տներից դուրս թափված, կտուրներում կանգնած, դիտում էին այդ հետաքրքրաշարժ եւ արտակարգ զորաշարժը: Մայրս ձեռքիցս բռնած՝ բարձրացանք մեր կտուրը: Նա զույգ ձեռքերը ճակատին դրած, աչքերը կիսաբաց, շարժվող զորքին նայելով՝ կողքի տղամարդուն դիմեց.

- Տե՛ր աստված, այս ի՞նչ բան է, կյանքումս մեր սարերում այսքան սեւ ասկյար չէր հավաքվել:

- Ոչինչ, ասկյարի զորախաղ է, վարժություններ են անում,- պատասխանեց կողքի տղամարդը,- այդպիսի զորախաղեր ես շատ ու շատ եմ տեսել:

Չորքը երկու մեծ եւ կուռ օղակով շրջափակեց մեր գյուղը, մի մասն էլ լցվեց փողոցները եւ շրջապատեց Հեթումենց խոտի մեծ մարագը, որի մի կեսը լցված էր դարմանով: Ոչինչ, ոչինչ չէր հասկացվում:

Ապա Հեթումենց (Եթմենց) մարագի մոտ կանչեցին գյուղի միակ գրագետ, բաբեր մելիք Հակոբին եւ մի թուղթ մեկնեցին նրան: Նա կարդալուց հետո կանչեց գյուղի գզիրին եւ ինչ-որ կարգադրություններ արեց: Գզիրը շրջեց տնից տուն, փողոցից փողոց եւ ասաց.

- Եթմենց մարագում ժողով կա, ոչ մի տղամարդ չբացակայի, հուլմամբի հրամանն է:

Թե ով էր եւ ինչացու էր այդ հուլմամբը, չհասկացա:

Շարունակելի

«ԵՐՈՍԱՊԵՆԻ ՌՈՍԱԿԱՆ ԵՆ ԽԱՅԿԱԿԱՆ ԱՐՔԱՎԱՅՐԵՐ» ԼՈՍԱՆՍԿԱՐՆԵՐՈՒՄ



Հայոց Եկեղեցու ամենանվիրական տոնի՝ Հիսուս Քրիստոսի Սբ Հարության օրվա նախօրեին ՀՀ քաղաքաշինության նախարարության ճարտարապետության թանգարանում բացվեց մի աննախադեպ ցուցահանդես, ուր ներկայացված էր Սանկտ Պետերբուրգի խոշորագույն թանգարաններից մեկի՝ Կրոնների պատմության պետական թանգարանի հավաքածուից Երուսաղեմի ռուսական եւ իսրայելական սրբավայրերի 60 բացառիկ լուսանկար: Պատմական այդ լուսանկարների մեծ մասը ցուցադրվում էր առաջին անգամ: Լուսանկարների հավաքածուն ստեղծվել էր Պաղեստինյան կայսերական ուղղափառ ընկերության ջանքերով, որն ունեցել է նաեւ հարուստ գրադարան: Այդ արժեքավոր հավաքածուների միայն մի մասն է փրկվել՝ հանգրվանելով Սանկտ Պետերբուրգի կրոնների պատմության պետական թանգարանում:

Ցուցահանդեսի համակարգողն էր թանգարանի գիտաշխատող, իսրայելական հավաքածուի պատասխանատու, արվեստաբան Ելենա Նիկոլաեան՝ հայ ազգին ու մշակույթին նվիրված մի արվեստագետ, ում երկար տարիների աշխատանքի արդյունքում ի մի են բերվել թանգարանի իսրայելական հարուստ ու բազմազան հավաքածուի ցուցանմուշները, ուսումնասիրվել եւ 2011 թվականին հրատարակվել նկարագրող գիտական կատալոգում:

Ցուցահանդեսում ներկայացված էին Երուսաղեմի ճարտարապետական հուշարձաններն ու հնավայրերը, ամբողջ քրիստո-

նական աշխարհի կողմից հարգված սրբավայրերը, որոնք հիմնականում առնչվում են Սուրբ հոգում Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարյա պատմությանն ու ռուսական հոգեւոր ներկայությանը: Ցուցահանդեսն ասես մի յուրատեսակ ուխտագնացություն էր, որի մասնակիցն էր դառնում յուրաքանչյուր այցելու՝ մտովի տեղափոխվելով 19-րդ դար, հայ եւ ռուս ուխտագնացների քարավանների հետ անցնելով հին քաղաքի փողոցներով, այցելելով սրբատեղիները, մասնակցելով եկեղեցական արարողություններին եւ ակա-

նատեսը լինելով եկեղեցիների, վանատների ու իջեւանատների կառուցմանն ու վերակառուցմանը:

Լուսանկարներն արվել են 19-րդ դարի երկրորդ կեսից մինչեւ 20-րդ դարասկզբի



հայտնի լուսանկարիչներ Ֆիորիլլոյի, Չ. Ուորենի, Բ. Գեյտլեյի, Ի. Բարշեյսկու, Թիմոնի (Թ. Դ. Կորոտկի), Ա. Յանիշի, ինչպես նաեւ «Բոնֆիս», «Յանգակի», Կ. Կրիկոբյանի լուսանկարչական ստուդիաների կողմից: Այս առումով եւս ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հանրությանը ծանոթացնում է լուսանկարչության պատմության ակունքներում կանգնած քիչ հայտնի կամ անհայտ ներկայացուցիչներին:

Ցուցահանդեսը գործեց մինչեւ մայիսի 5-ը՝ ընդգրկելով Չատկի տոնի՝ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների տոնակատարությունների ժամանակահատվածը:

Քնարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՐԱՆԵԼԻ ՍՈՒՐԲ ԲՄՐՍԵՐԻ՝ ԿՄՊՄԴՈՎԿԻՈՅ ԿԵՍԱՐԻՎՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ [ԽՕՍՔԸ] ԴՎՋԲԻ ՄՎԱԽՆ

Սկիզբը՝ թիվ 6-8

Ժ. Եւ սոսկ կերակրից հեռու մնալով մի՛ սահմանափակիր պահից բարիքը, որովհետեւ իրական պահից չար գործերից զերծ մնալն է՝ «քանդի՛ր հանգոյցն անի-րաւութեան» (Եսայ. ԾԸ 6): Ների՛ր մերձաւորիդ յանցանքը, բաշխի՛ր նրա պարտքը, պահից մի՛ անցկացրու «հա-կառակութեան եւ կոփւների մէջ» (Եսայ. ԾԸ 4): Միս չես ուտում, բայց յօշոտում ես եղբորդ, գինի չես խմում, սակայն զերծ չես մնում վիրաւորելուց: Ծաշակելու հա-մար համբերում ես մինչեւ գիշեր, սա-կայն օրն անց ես կացնում դատական ա-տեանում: «Վա՛յ ձեզ, որ արբենում էք, բայց ոչ գինով» (Եսայ. ԻԸ 1): Սրտմտու-թիւնը՝ [ցատում], արբեցութիւնն է հո-գու, այն եւս, ինչպէս գինին, խելայեղու-թեան է հասցնում: Տրտմութիւնը եւս ար-բեցութիւն է, այն խորտակում է միտքը: Այլ արբեցութիւն է երկիւղը, որն առաջա-նում է բաներից, որոնք չպետք է վախ յա-րուցանեն, որովհետեւ ասուած է. «Թշ-նամու սարսափից փրկի՛ր ինձ» (Սաղմ. ԿԳ 2): Եւ ընդհանրապէս՝ ցանկացած կիրք, որ խելահաս է անում, տեղին է ար-բեցութիւն անուանել: Պատկերացրու բորբոքուած մէկին. ինչ սարսափելի ար-բեցման մէջ է նա, ինքն իր տերը չէ, ինքն իրեն չի ճանաչում, չի ճանաչում շուրջը եղածներին: Ասես գիշերուայ [խաւա-րում] կռուող [մէկը լինի, որ ոչինչ չի տես-նում], բոլորին դիպչում է, ամենքի վրայ յարձակում, խօսում անիմաստ, աղա-ղակում, վիրաւորում է, խփում, սպառ-նում, անիծում, [կարծես] պատռում [մէջտեղից]:

Փախի՛ր այդ արբեցութիւնից, հեռո՛ւ մնա նաեւ գինու մոլուցքից: [Պետք չէ], որ ջուր խմելուն (*իմա՛ պահքին*) նախորդի գինարբուքը: Պետք չէ, որ առ խորհուրդ-ները [բարի] քեզ առաջնորդի արբեցու-թիւնը: Արբեցութեամբ չես մտնում պահ-քի մէջ, ինչպէս եւ աւելաստացութեամբ (*իմա՛ ազատութեամբ*) չես հասնում ար-դարութեան, վաւաշտութեամբ՝ ողջա-խոհութեան, եւ ոչ չարութեամբ՝ առաքի-նութեան: Այլ է մուտքը պահից: Արբեցու-թիւնը պակշտութեան է հասցնում, իսկ առ պահքն ուղղորդում է սակաւապե-տութիւնը: Ըմբիշը նախապէս մարզում է մարմինը, [պահքի պատրաստուողը]՝ ժուժկալութեամբ զբաղում: Չի՛ կարելի, որ այս հինգ օրուան նախորդի արբեցու-թիւնը. որ ասես դրանով քեզ պարգե-

ւատրում ես [հինգ օրերի համար] կամ խաբում ես Օրինադրին: Անստութիւն ես անում, մարմինդ ես կործանում եւ ոչ թէ միսիթարում կարօտը: Անվստահելի է շտեմարանն այս, եւ ծակ կարանս ես ու-զում [ցնել, որովհետեւ գինին կցնդի, կզ-նայ իր ճանապարհով, իսկ մեղքը կմնայ: Ծեծող տիրոջից փախչում է ծառան, իսկ դու մնում ես մշտապէս գլխիդ խփող գի-նու [իշխանութեան ներքոյ]: Գինու բար-ւոյ չափը մարմնի կարիքով [սահմանա-փակուելն] է: Իսկ եթէ չափից դուրս գաս, յաջորդ օրը գլուխդ ծանրացած է լինելու, յօրանջելու ես եւ գլխապտոյտ ես ունե-նալու, վրայիցդ նեխած գինու հոտ է գա-լու, եւ թուալու է, թէ ամեն բան շարժում ու ճոճում է: Արբեցութիւնը [մի անսո-վոր] քուն է բերում, որ եղբայրն է մա-հուան, եւ [անգամ] արթուն վիճակդ երա-գի [ու թմբիի] պէս է լինելու:

ԺԱ. Գիտե՛ս արդեօք՝ Ո՛ւմ ես պատ-րաստում ընդունել. Նրան, որ խոստա-ցաւ. «Ես եւ Հայրը կզանք եւ նրա մօտ կօթեանեսք» (հմտ. Յովհ. ԺԴ 23): Ուս-տի ինչո՞ւ ես մինչ այդ արբեցութեամբ զբաղում ես փակում տերունեան մուտ-քը: Ինչո՞ւ ես թոյլ տալիս, որ թշնամին գրաւի քո ամրութիւնները: Արբեցութի-ւնը Տիրոջը [յաւուր պատշաճի] ընդունե-լու [տեղ չի թողնում], վանում է Սուրբ Հո-գուն: Որպէս ծուխն է վանում մեղունե-րին, արբեցութիւնը հալածում է հոգեւոր շնորհները:

Պահքը բարեճեւութիւնն է քաղաքի, բա-րեկարգութիւնը գոեհի (*իմա՛ շուկայ*), խա-ղաղութիւնը տների եւ փրկութիւնը գոյքի: Ուզո՞ւմ ես տեսնել պահքի [յարգն ու] պատկառանքը: Բաղդատի՛ր այսօրուայ երեկոն եւ վաղուանը. կտեսնես, որ խռո-վեալ եւ վրդոված վիճակից քաղաքն անցաւ խորին խաղաղութեան: Բայց ա-ղօթում եմ, որ երեկոն այս արժանաւորու-թեամբ նմանուի վաղուանին, իսկ եկողն [իր] պայծառութեամբ չզիջի ներկայիս: Իսկ նա, որ մեզ դրեց ժամանակների այս ճանապարհի վրայ, որպէս մարտիկների՝ թո՛ղ շնորհիւ ամրութիւն եւ զօրութիւն սր-տի՛ այս գալիք մրցութեանը [պատրաս-տուելու եւ] հասնելու պսակի. այժմ՝ փր-կաւետ չարչարանքի յիշատակի [օրը], եւ ապագայում՝ Քրիստոսի արդար ատենի տեսնալի [ժամանակ]. եւ Նրան փառք յա-ւիտեանս յաւիտենից. ամեն:

Գրաբարից փոխադրութիւնը՝
Գեորգ ՄԱՂՈՅԵԱՆԻ

ԼՈՒՅՍԻ ՃԱՆԱՊԱՐԿՈՎ...

Սկիզբը՝ էջ 5

ՀՅԴ-ն ստեղծվում է այն ժամանակ, երբ արդեն իրենց գործունեությունն էին ծավա-լել հայրենասիրական խմբակներն ու առա-ջադեմ երիտասարդությունը: Թեպետ ժա-մանակաշրջանի եւ արմատական նշանա-կություն ունեցող իրարաբնությունների թե-լանդրանքով ՀՅԴ-ն փոխում է իր գործու-նեության մարտավարությունը, սակայն մարտական-հայրուկային եւ զինատար խմ-բերի տեղն ու դերը ազգային-ազատագրա-կան պայքարում անփոխարինելի էին. Եր-կիր մեկնող մարտական եւ զինատար խմբե-րին հիմնականում զինվորագրվում էին ամե-նանվիրայներն ու խիզախները:

Սարգիս Կուկունյանի խումբը կազմա-վորվում է Գում Գափուի ցույցից հետո՝ ՀՅԴ-ից առաջ եւ նրանից անկախ:

Նորակազմ կուսակցության ղեկավա-րությունն սկսում է միջամտել խմբի նա-խապատրաստական աշխատանքներին. դաշնակցականները ձգտում էին խումբը համալրել եւ գործունեության իրատեսա-կան ծրագիր մշակել: 1890 թ. սեպտեմբե-րին աշխատանքի անցած առաջին Վար-չության կամ «Կենտրոնի» աջակցու-թյամբ լրացվում է խմբի կազմը, ռազմա-



թերք ու պարեն է ձեռք բերվում: Սակայն որոշ ժամանակ անց տարածայնություն-ներ են սկսվում Սարգիս Կուկունյանի եւ ՀՅԴ Կարսի մասնաճյուղի միջեւ. նրանք

հետագա գործունեության տարբեր ռազ-մավարություն էին որդեգրել («Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 13): Բանակցու-թյունները որեւէ արդյունք չեն տալիս. Կուկունյանը հրաժարվում է ենթարկվել «Կենտրոնի» հրահանգներին՝ չընդունե-լով նրա գերակայությունը: Կոստանդին Խատիսյանը, Սիմոն Չավարյանը փոր-ձում են հարթել տարածայնությունները, սակայն ապարդյուն: Ս. Կուկունյանին չի կարողանում մտափոխել նաեւ Իշխանը (Հ. Արդույան). վերջինս փորձում է հիմ-նավորել, որ շտապողականությունը կա-րող է ողբերգական հետեւանքներ ունե-նալ, արեւմտահայությունը դեռեւս պատ-րաստ չէ ապստամբության, նախ պետք է ունեցած ռազմատեղեւ անցկացնել Ա-րեւմտյան Հայաստան, աստիճանաբար զինել եւ նախապատրաստել ժողովրդին: Բոլոր հորդորներն անարձագանք են մնում: Այս մասին Ռոստոմը (Ստեփան Չո-րյան) նկատում է. «Սա մի տարերային հո-սանք էր, ազնիւ, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն ակարբելի էր առնել ոչ մի յոր-դորանքով, ոչ մի խելացի պատճառաբա-նութիւններով, ոչ մի սարսափելի ապա-գայի նկարագրութիւններով» («Յեղափո-

խական ալպում», էջ 53):

Անցնելով Կարս՝ Սարգիս Կուկունյանն ազատամարտիկներին բաժանում է փոքր խմբերի եւ տեղավորում հայկական գյու-ղերում:

Ճարուսակելի
Արփիկե ՉԱՆԹԻՎՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյան Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 17.5.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ